

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Մարտի 1-ի Տխուր էջը Փակելու ճանապարհին

Այս շաբաթ Հայաստանի մեջ կը նշուի 2008 թուականի Մարտի 1-ին երեւանի սրտին մեջ տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւններու 11-րդ տարելիցը: Ընտրութիւններու արդիւնքները բողոքարկող խաղաղ ցուցարարներու դեմ օգտագործուած բռնի միջոցները խլեցին տասը անմեղ զոհեր, որոնց հարազատներն ու ժողովուրդը ընդհանրապէս, անցնող տասնամեակին կարողացաւ վառ պահել անոնց յիշատակը, միշտ հաւատալով, որ քաղաքացիներու վրայ կրակելու հրաման արձակողները, ուշ թէ կանուխ պիտի ենթարկուին պատասխանատուութեան:

Այդ օրերու իշխանութիւններուն առանցքային դէմքերը այժմ նստած են անբաստանելի աթոռին: Կը սպասուի որ յառաջիկայ ամիսներուն տեղի ունենան անոնց դատավարութիւնները:

Անցնող տարիներուն նախկին վարչակարգը ոչ մէկ քայլ առաւ արդար քննութիւն իրականացնելու ուղղութեամբ: Ընդհակառակը, ամեն ջանք թափուեցաւ հարցը ձգձգելու, փաստերը խեղաթիւրելու եւ ժողովուրդի յիշողութենէն ջնջելու նպատակով: Այս պատճառաւ ալ միշտ կը հնչէր այն տեսակետը, որ «Մարտ 1-ը» կրնան բացայայտուիլ միայն այն պարագային, երբ Հայաստանի մէջ տեղի ունենայ իշխանափոխութիւն:

Նախկինները թէւ վստահ էին, որ իրենց իշխանութիւնը յաւերժական է ու ոչ մէկ ուժ կրնայ սասանել իրենց աթոռները, սակայն ժողովրդային կամքի գործիւնը, յարթահարելով բոլոր դժուարութիւնները, անցեալ տարուայ Մայիսին իրականացուց երկար սպասուած իշխանափոխութիւնը:

Այս տարի «Մարտի 1»-ը տարբեր նշանակութիւն ունի Հայ ժողովուրդի համար: Սգալով հանդերձ զոհերու կորուստը, կայ նաեւ բաւարարութեան զգացում, որ վերջապէս երկրէն ներս հաստատուած է արդարութիւն եւ թափուած արիւնը ու բազում զոհողութիւնները ի գուր տեղ չեն վատնուած:

Համոզուած ենք որ, ամբաստանաւանդներուն պիտի տրուին պաշտպանութեան բոլոր միջոցներն ու իրաւունքները: Դատարաններու արձակած որոշումները, թէ ներքին հասարակութեան մօտ եւ թէ արտաքին աշխարհի առջեւ որեւէ կասկած պէտք չէ յառաջացնեն, որպէսզի կարելի ըլլայ Մարտի 1-ի տխուր էջը վերջնականապէս փակել ու գայն յանձնել մեր պատմութեան, յուսալով որ այսուհետեւ նման ողբերգութիւններէ հեռու կը պահուի մեր երկիրը:

«ՄԱՍԻՍ»

### Պաշտպանութեան Նախարարը Յայտարարեց, Որ Հայաստան Սկսած է Ապահովել Յարձակողական Զենքեր

«Հայաստանը չի գնալու Ատրպէյճանի հետ սպառազինութեան հաւասարակշռութիւնը վերականգնելու ճանապարհով: Դա ոչ գործնական մօտեցում է: Մենք ո՛չ քանակական, ո՛չ ժողովրդագրական, ո՛չ տնտեսական առումով չենք կարող Ատրպէյճանի հետ հաւասար լինել: Մենք աւելի շատ ուշադրութիւն ենք դարձնելու որակական խնդիրներին», Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցի ժամանակ յայտարարեց ՀՀ պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը:

Ան ըսաւ, որ Ռուսաստանէն 100 միլիոն տոլարի վարկով այնպիսի սպառազինութիւն պիտի գնուի, որ թոյլ կու տայ ՀՀ զինուած ուժերուն յաջողութեամբ լուծել իր խնդիրները:

Անդրադառնալով «Սու 30» ինքնաթիռներու ձեռքբերման ուղղուած քննադատութիւններուն, թէ անոնք սուղ են, Դաւիթ Տօնոյեանը ըսաւ. «Ես չգիտեմ, թէ թանկարժէքութիւնը որն է: Ինձ համար թանկ է իւրաքանչիւր շարքայինի, զինուորականի կեանքը: Եթէ երկու օդաչու «Սու-30»-ով կարող են առաջնագծից հարիւրաւոր քիւլմէթր հեռու կատարել խնդիր հազարաւոր զինծառայողների փո-



ՀՀ պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան

խարէն, ի՞նչ թանկարժէքութեան մասին է խօսքը: Մենք գտնելու ենք աւելի ազդեցիկ լուծումներ հակառակորդին զսպելու եւ յաղթելու համար»:

Դաւիթ Տօնոյեանը նշեց, որ Հայաստանը սկսած է յարձակողական զէնքեր գնել. «Պաշտպանող բանակը միշտ պարտութիւն է կրում, մենք չենք պատրաստուած մնալ պաշտպանողական դիրքերում: Եթէ խնդիրը գնալու է ռազմական գործողութիւնների վերսկսմանը, մենք չենք յապաղե-

լու»,- ըսաւ նախարարը: Ճշդող հարցին՝ պիտի յարձակի՞նք, ան պատասխանեց. «Ինչո՞ւ ոչ»:

Հարցազրոյցի ծիրէն ներս անդրադարձ կատարուեցաւ «Մարտի 1»-ի գործի մասին, Տօնոյեանը յայտնեց, որ «Մարտի 1»-ի քրէական գործը ե՛ւ աւագ կազմի, ե՛ւ բարձրագոյն սպայական կազմի տրամադրութիւններուն վրայ որոշակի ազդեցութիւն կ'ունենայ՝ հաշուի առնելով նախաքննութեան փուլը:

«Անընդհատ հրաւէրներ Յատուկ քննչական ծառայութիւն եւ այլ վաչքեր: Դրա համար որոշակի ազդեցութիւն ունենում է, բայց միանշանակ է, որ զինուած ուժերը պէտք է ապաքաղաքական լինեն: Այլեւս այդպէս շարունակել չի կարելի», - ըսաւ ան:

Հարցին, թէ Մարտի 1-ին բանակը մասնակցութիւն ունեցած է, պաշտպանութեան նախարարը ըսաւ. «Զինուած ուժերն օգտագործուել են, այո: Մարտի 1-ի դէպքերին զինուած ուժերը ներկայ են եղել եւ կատարել են իրենց պարտականութիւնը: Քանի որ նախաքննութեան փուլն աւարտուել է, մտնում ենք դատաքննութեան փուլ, ես կը խուսափեմ որեւէ գնահատական տալուց: Բայց որ զինուած ուժերը ներկայ են եղել եւ օգտագործուել են, դա փաստ է»:

### Սվիթալսքի. Կաշառակերութեան Դեմ Պայքարի Գծով Այժմ Կայ Քաղաքական Կամք

Հայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Փիլիթալսքին մամուլի հետ հանդիպման ընթացքին նշած է թէ, արդէն իսկ լուրջ առաջընթաց կը տեսնեն կաշառակերութեան դէմ պայքարին մէջ, բայց, աւելցուցած է, պայքարը դեռ երկարատեւ պիտի ըլլայ: Դեսպանը անդրադարձած է շարք մը ներքաղաքական խնդիրներու, խօսած է նաեւ Հայաստան-Եւրոմիութիւն յարաբերութիւններու զարգացման մասին:

Կաշառակերութեան դէմ պայքարի մասով Սվիթալսքին իր խօսքին մէջ ընդգծած է՝ ոչ միայն Հայաստանի քաղաքացիները, այլ նաեւ Հայաստանի գործընկերները կը նկատեն՝ կաշառակերութեան դէմ պայքարի համար հիմա կայ քաղաքական կամք:

«Բայց քաղաքական կամքը, ըլլալով պարտադիր, դեռ բաւարար չէ, անհրաժեշտ են այլ տարրեր, մասնաւորապէս՝ հաստատութիւններ, օրէնքներ եւ հանրային մշակույթ կամ միջավայր: Հաստատութիւններու մասով, մենք կը տեսնենք, որ կառավարութիւնը կ'ուզէ ստեղծել նոր, անկախ հակակաշառակերային գերատեսչութիւն, կեդրոն, որ ունենայ ամբողջական լիազօրութիւններ: Երկրորդը՝ Հա-



Հայաստանի մէջ Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Փիլիթալսքի

յաստանին անհրաժեշտ են նոր օրէնքներ, եւ եթէ դուք նայիք կառավարութեան ծրագիրը, արդէն որոշակի օրէնսդրական նախաձեռնութիւններ այստեղ ամրագրուած են, ինչը լաւ նշան է: Եւ, ի վերջոյ, Հայաստանին անհրաժեշտ է հանրային աջակցութիւն, այսինքն՝ հանրային անհանդուրժողականութիւն կաշառակերութեան նկատմամբ: Եւ դարձեալ,

Շար.ը էջ 5

### Ս.Գ.Յ.Կ.-ի Ցաւակցագիրը Տիկին Լուիզ Սիմոն Մանուկեանի Մահուան Առթիւ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անունով, կու գանք մեր խորին ցաւակցութիւնը յայտնելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ համայն Բարեգործական շրջանակին Տիկին Լուիզ Սիմոն Մանուկեանի մահուան կապակցութեամբ:

Ազգային բարերար եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան երկարամեայ նախագահ՝ Տիկին Մանուկեանը արժանաւոր ժառանգորդն ու շարունակողը եղաւ իր հօր՝ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Զեռոս Ալեք Մանուկեանի ազգանուէր գործունէութեան, իր մեծ աւանդը բերելով հայ ժողովուրդի կրթական, մշակութային եւ այլ ոլորտներուն մէջ, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի տարածքին:

Մեր խորագազ ցաւակցութիւնները կը փոխանցենք մահ Տիկին Մանուկեանի ընտանիքի բոլոր անդամներուն եւ հարազատներուն:

Ս.Գ.Յ.Կ.  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
Փետրուար 20, 2019



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մարդը Իսկապես Բարձրագոյն Արժէք է Չայաստանի Մէջ». Փաշինեան

Այսօր Հայաստանի Հանրապետութեան մէջ Հաստատուած է կառավարութիւն, որ մարդու իրաւունքներու խախտման դէմ պայքարող մարդոց եւ կառուցաներու դաշնակիցն ու հովանաւորն է, այս մասին Մատենադարանէն ներս՝ Համընդհանուր իրաւունքներու մրցանակաբաշխութեան ժամանակ իր ելոյթին մէջ ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետը նշած է՝ իրաւունքներու պաշտպանութեան իրենց բանաձեւը բոլոր քաղաքացիներուն համար հաւասար հնարաւորութիւններ եւ այդ հաւասար հնարաւորութիւններու նկատմամբ հաւասար հասանելիութիւն ստեղծելն է:

«Մենք հետեւողականօրէն գնալու ենք այս ճանապարհով: Մեր քաղաքական տեսակէտը եւ հայեացքը, զաղափարախօսութիւնը հետեւեալն է, որ իրաւունքների պաշտպանութեան համաթեքսթում առաջին անելիքն այն է, որ Հայաստանի Հանրապետութիւնում իւրաքանչիւր քաղաքացի իր սոցիալական (ընկերային), գիտական, տնտեսական, քաղաքական դիրքին արժանանալ իր առարկայական ընդունակութիւնների իրացմամբ: Սա չի նշանակում, թէ այն մարդիկ, ովքեր կարող է չունեն այդ առարկայական ընդունակութիւնները, պէտք է դուրս մնան այս քաղաքականութեան շրջագծից: Ընդհակառակը՝ մեզ համար կարեւոր է, որ մենք մարդկանց աջակցենք, քաջալերենք, օգնենք, որպէսզի նրանք

իսկապէս նաեւ իրենց առարկայական ընդունակութիւնները զարգացնելու, կրթական համակարգի եւ կրթութեանը հասանելի լինելու հնարաւորութիւնների մէջ լինեն հաւասար ուրիշների հետ եւ ուրիշների հետ օգտուեն հաւասար հնարաւորութիւններից: Սա ռազմավարական խնդիր է մեզ համար, մեր երկրի համար, եւ այս խնդրի լուծման համաթեքսթում մենք պիտի կարողանանք հասնել նրան, որ Հայաստանում բոլոր դիրքերում լինեն լաւագոյնները՝ քաղաքականութեան մէջ լինեն լաւագոյնները, կառավարութեան մէջ լինեն լաւագոյնները, տնտեսութեան մէջ լինեն լաւագոյնները, կրթութեան մէջ լինեն լաւագոյնները, որովհետեւ միայն արդար եւ հաւասար հնարաւորութիւնների հասանելիութիւնն է, որ այսպիսի իրավիճակ կը ստեղծի Հայաստանի քաղաքացիների համար», - ըսած է վարչապետը:

Փաշինեանը նշած է, որ իրենց համար կարեւոր է արձանագրել, որ մարդը իսկապէս բարձրագոյն արժէք է Հայաստանի Հանրապետութեան մէջ:

«Մարդը բարձրագոյն արժէք է Հայաստանի կառավարութեան համար, Հայաստանում հաստատուած իշխանութեան համար եւ մեր ամենակարեւոր անելիքը նաեւ համարում ենք այն, որ մարդը լինի բարձրագոյն արժէք նաեւ ուրիշ մարդու համար», - ըսած է Փաշինեանը:

Տիգրան Յակոբեանի Տեղափոխումը Չեռուստալուկերութիւններու Ոլորտին Մասին

Հայաստանի մէջ կը գործէ 128 հեռուստառատիոններութիւն, որմէ 120-ը արտօնեալ է, 8-ը՝ ոչ: Նշուած 120-էն 102-ը հեռուստառնկերութիւններ են, 18-ը՝ ռատիոնկերութիւններ: Հեռուստառնկերութիւններէն 35-ը եթերային է, 67-ը՝ ցանցային:

«Արմէնքրես»-ի մամուլի սրահէն ներս հրաւիրուած ասուլիսի ժամանակ Հեռուստատեսութեան եւ ռատիոյ յանձնաժողովի նախագահ Տիգրան Յակոբեանը նշած է, որ ցանցայիններու մէկ մասը կը գործէ Երեւանի մէջ, միւս մասը՝ մարզերուն մէջ:

«Մենք հետեւում ենք հեռուստառատիոններութիւնների եթերին, փորձում ենք պարզել, թէ որքանով է պահպանուած լեզուի մասին օրէնքը, որքանով չի խախտուում հեղինակային իրաւունքը, հետեւում ենք հայրենական արտադրանքի ծաւալին եւ այլն: Ես այստեղ մի քանի խնդիրներ կ'առանձնացնեմ՝ կապուած հայրենական արտադրանքի ծաւալի, հանրօգուտ բովանդակութիւն արտադրութեան, մարզային հեռուստառնկերութիւնների խնդիրների հետ», - ըսած է Տիգրան Յակոբեանը:

Ան նշած է, որ, ըստ օրէնքի, հեռարձակողներու եթերային բովանդակութեան առոււտագն 55 տոկոսը պէտք է ըլլայ հայրենական արտադրանք: Հայրենական արտադրանք կը համարուի հաղորդումը, ֆիլմը, որ Հայաստան արտադրուած է կամ այլ երկրի արտադրանք է, սակայն ներկայաց-



Չեռուստատեսութեան եւ ռատիոյ յանձնաժողովի նախագահ Տիգրան Յակոբեան

ուած է թարգմանութեամբ:

«Օրէնքով սահմանուած այդ 55 տոկոսը չի պահպանուած: Եթէ խոշոր հեռուստառնկերութիւնները պահպանում են, ապա մի զգալի հատուած չեն հետեւում օրէնքի պահանջին: Այդ տեսանկիւնից մարզերում ողբալի վիճակ է: Հեռուստառնկերութիւններ կան, որոնց հայերէն լեզուով արտադրանքը կազմում է 15-16 տոկոս: Բնակչութիւնը ստիպուած է առաւօտից երեկոյ ռուսերէնով ֆիլմեր, հաղորդումներ նայել: Մարդիկ գրկուած են հայերէնով հաղորդումներ նայելուց», - ըսած է ան:

«Մենք այսպիսի լուծում ենք առաջարկում: Քանի որ ունենք հարուստ հեռուստառնկերութիւններ, որոնք կրկնօրինակման ծաւալուն աշխատանքներ են տանում եւ ունեն սեփական արտադրութեան բովանդակութիւն, ապա առաջարկում ենք այնպիսի պայմաններ ձեւաւորել, որ մարզային հեռուստառնկերութիւնները կարողանան օգտուել այդ արտադրանքից: Մասնաւորապէս, ստեղծել հայերէն լեզուով արտադրանքի շտեմարան», - ըսած է Տիգրան Յակոբեանը:

ՄԻԵԴ-ը Մարտ 1-ի Գործով Տեր-Պետրոսեանի Բողոքը Մերժելու Մասին Որոշում Զէ Կայացուցած. Փաստաբան

Փաստաբան Վահէ Գրիգորեանը իր ֆէյսպուքեան էջին վրայ անդրադարձած է Մարդու իրաւունքներու եւրոպական դատարան (ՄԻԵԴ) ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ներկայացուցած գանգատը մերժելու մասին հրապարակումներուն ու հերքած է գանոնք:

«Միւրեւի՛ ընկերներ, այսօր առաւօտեան տեղեկացայ, որ մի շարք ՁԼՄ-ներ սկսել են տարածել լուրեր այն մասին, թէ իբր ՄԻԵԴ-ը 2012-ին կայացրել է մի որոշում՝ նախագահ Տէր-Պետրոսեանի գանգատը Մարտի-1-ի գործով մերժելու վերաբերեալ:

Այնուհետեւ, թեքսթի՝ իրականութեանը չհամապատասխանող անհասկանալի եւ մանիփուլիսթիկ (ձեռնաւարական) շարադրանքը եզրահանգեցրել է, որ ՄԻԵԴ-ն արդէն իսկ քննել է 2008-ի մարտի 1-ի առանցքային հարցերի վերաբերեալ մի գանգատ եւ որոշել, որ «ներկայիս իշխանութիւնների կողմից առաջ տարուող թէզը, թէ այն ժամանակուայ իշխանութիւնը, եւ, մասնաւորապէս, նախագահ Ռոպերթ Քոչարեանը սահմանադրական կարգի խախտում է թույլ տուել, հիմնաւոր չէ: Այսինքն՝ Նիկոլ Փաշինեանի իշխանութեան օրօք Ռոպերթ Քոչարեանին առաջադրուած սահմանադրական կարգի տապալման մեղադրանքն անհամատեղելի է ՄԻԵԴ-ի՝ 2012 թուականի որոշման հետ: Սա էլ իր հերթին նշանակում է, որ...»:

Տեղեկացնեմ, որ ոչ ՄԻԵԴ-ը, ոչ էլ որեւէ հայկական որեւէ ներ-



Փաստաբան Վահէ Գրիգորեան

պետական դատարան առ այսօր չի քննել նախագահ Քոչարեանին առաջադրուած մեղադրանքի կապակցութեամբ որեւէ գործ, որով հաստատուէր կամ հերքուէր այն մեղադրանքը, որը վերջինիս առաջադրուած է: Եւ ոչ էլ ՄԻԵԴ-ի կողմից որեւէ վճիռ կամ որոշում է առ այսօր կայացուել, որով հերքուեն այնպիսի պնդումներ, որոնք նախագահ Քոչարեանին, զօրավարներ խաչատուրովին ու Օհանեանին եւ պրնգ Գէորգեանին մեղսագրուող արարքների համար կարող են արդարացնող իրաւական հիմքեր կամ փաստական հանգամանքներ պարունակել: Եւ միայն իրաւաբանները կը հասկանան, թէ իրաւագիտութեան ոլորտի ինչպիսի բարձր գիտական կոչում պէտք է ունենայ այն իրաւաբանը, որը կարծում է, թէ ՄԻԵԴ-ը որեւէ

Ալեն Սիմոնեանը ՀՀ Օրինագի Բաւերու Մրցոյթ Յայտարարած է

Աժ փոխնախագահ Ալեն Սիմոնեանը Արամ Խաչատրեանի երաժշտութեան հիման վրայ Հայաստանի օրհներգի բառերու մրցոյթ յայտարարած է: Անոր խօսքով, աշխատանքային խումբը պիտի ամփոփէ մրցոյթի արդիւնքները, ՀՀ-ի մէջ պիտի հնչէ նոր օրհներգի տարբերակը, որ, սակայն, ինքը չի պատրաստուիր Աժ օրակարգ մտցնել: «Այն կը յանձնուի հանրութեանը, կը մնայ ժողովրդի գլուխներում, երբ ժամանակը գայ, այդ թեմային նորից կը վերադառնանք», - ըսած է Ալեն Սիմոնեանը:

Սիմոնեանը հրապարակած է աշխատանքային խումբի կազմը՝

1. Դանիէլ Երաժիշտ Խմբավար, երաժշտագէտ
2. Տէր Ասողիկ Հոգեւորական, Մայր Աթոռ
3. Արամ Սաթեան յօրինողներու միութեան նախագահ
4. Ալեն Սիմոնեան Աժ նախագահի տեղակալ
5. Խոսուարտ Միլիտոնեան Գրողներու միութեան նախագահ
6. Նիքոլայ Կոստանեան Կոմիտասի թանգարան-հիմնարկի տնօ-



Աժ փոխնախագահ Ալեն Սիմոնեան

7. Արմինէ Գրիգորեան Արամ Խաչատրեանի տուն-թանգարանի տնօրէն
8. Հենրիկ Յովհաննիսեան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դոկտոր, փրոֆեսոր
9. Ֆելիքս Բախչինեան զրականագէտ
10. Դաւիթ Գիւրճինեան Լեզուի պետական կոմիտէի նախագահ

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանի Ազգային Ժողովի Նախագահ Արարատ Միրզոյանի Այցը Մոսկուա



Արարատ Միրզոյանը եւ Ռուսաստանի Դաշնային Ժողովի նախագահ՝ Վալենթինա Մաթվիենքոյ Մոսկուայի համդիպման ընթացքին

Կը շարունակուի Հայաստանի Ազգային Ժողովի խօսնակ Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Մոսկուա: Ան հանդիպած է հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ՝ Ռուսաստանի մայրաքաղաքի հայկական եկեղեցուց դահլիճէն ներս:

Երկուշաբթի օր Արարատ Միրզոյանը հանդիպած է Ռուսաստանի Դաշնային Ժողովի Դաշնութեան խորհուրդի նախագահ Վալենթինա Մաթվիենքոյի հետ: Հանդիպման ժամանակ երկու կողմերն ալ խօսած են հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային յարաբերութիւններու մասին:

Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի խօսնակը գոհունակութիւն յայտնած է այն կապակցութեամբ, որ Հայաստանի նորընտիր խորհրդարանի ղեկավարը իր առաջին այցը կը կատարէ Ռուսաստան:

«Ուրախալի է, որ Դուք Ձեր առաջին արտաքին քաղաքական այցը կը կատարէք Ռուսաստան: Սա կը խօսի մեր երկիրներու յարաբերութիւններու ռազմավարական բնոյթին մասին», - յայտարարած է Մաթվիենքոյ:

## ԱՄՅ-ն Պատրաստակամ է Օժանդակութիւն Տրամադրելու ՀՀ Կառավարութեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ընդունած է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գործադիր խորհուրդի տնօրէն Ռիչարտ Տորնպոլը, որ Արժույթի միջազգային հիմնադրամի մէջ Հայաստանը կը ներկայացնէ:

Վարչապետը նշած է, որ ՀՀ կառավարութիւնը կը կարեւորէ ԱՄՀ-ի հետ շարունակական համագործակցութիւնը եւ շահագրգռուած է կառուցողական գործընկերութեան յետագայ խորացմամբ:

ԱՄՀ գործադիր խորհուրդի տնօրէնի խօսքով՝ Հայաստանը յուսալի գործընկեր է Արժույթի միջազգային հիմնադրամի համար, եւ ԱՄՀ-ն պատրաստակամ է օժանդակութիւն տրամադրելու ՀՀ կառավարութեան՝ տարբեր ուղղութիւններով նախաձեռնած բարեփոխումները յաջողցնելու համար:

Վարչապետի պաշտօնական կայքէջը կը տեղեկացնէ, որ գրուցակիցները քննարկած են համագործակցութեան ընդլայնման եւ զարգացման հեռանկարները:

րարած է Մաթվիենքոյ:

27 Փետրուարին Ազգային Ժողովի խօսնակը ելոյթ պիտի ունենայ Դաշնութեան խորհուրդի լիազօրեմար նիստին, եւ սա, Մաթվիենքոյի խօսքով, առաջին անգամն է, երբ Հայաստանի խորհրդարանի ղեկավարին նման հնարաւորութիւն կ'ընձեռուի:

Ռուսաստանի Դաշնութեան խորհուրդի ղեկավարը անդրադարձած է նաեւ Հայաստանեան յեղափոխութեան՝ ընդգծելով, որ անցած տարուան ապրիլին տեղի ունեցած զարգացումները հայ Ժողովուրդի ընտրութիւնն է, եւ Ռուսաստանի համար կարեւոր էր, որ այդ իրադարձութիւնները անցած են Հայաստանի օրէնքներուն համապատասխան եւ ունեցած են խաղաղ բնոյթ:

Արարատ Միրզոյանը Վալենթինա Մաթվիենքոյին հրաւիրած է Հայաստան: Աժ խօսնակը ընդգծած է՝ Հայաստանի խորհրդարանէն ներս ներկայացուած երեք խմբակցութիւններն ալ կը համարեն, որ հայ-ռուսական յարաբերութիւններու ռազմավարական բնոյթը պէտք է շարունակական ըլլայ:

Վարչապետը անդրադարձած է ՀՀ կառավարութեան բարեփոխումներու օրակարգին՝ խօսելով տնտեսութեան կառուցուածքին մէջ բարձր արհեստագիտութեան խթանման, Հարկային օրէնսդրքի բարեփոխման, միջօպիզնեսի ստեղծման, պիզնես միջավայրի համար կարգաւորումներու դիւրացման, պետական կառավարման եւ կրթութեան համակարգերու բարեփոխման, հակակաշառակերային քաղաքականութեան շրջանակէն ներս տարրուող աշխատանքներուն մասին: Նիկոլ Փաշինեանը նշած է, որ տնտեսութեան կառուցուածքի փոփոխութեամբ եւ տարբեր ճիւղերու մէջ բարձր արհեստագիտութիւններու կիրառման խթանմամբ կառավարութիւնը նպատակ ունի Հայաստանը դիւրաբար որպէս արհեստագիտական երկիր եւ, հաշուի առնելով ՏՏ «Տեղեկատուական թեխնոլոգիաներու» ոլորտի մէջ առկայ մեծ ներուժը, արտահանման միտուած տնտեսութիւն ձեւաւորել:

## Ուաշինկթընի Մէջ Կայացած է Հայաստանի Մէջ ԱՄՆ Նորանշանակ Դեսպանի Երդման Արարողութիւնը



Ուաշինկթընի մէջ կայացած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Լին Մ. Թրէյսիի երդման արարողութիւնը: Այս մասին կը տեղեկանանք Հայաստանի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանութեան ֆէյսպուքի էջէն:

«Այս շաբաթ Լին Մ. Թրէյսիին երդում տուաւ ծառայել Հա-

յաստանի Հանրապետութեան մէջ որպէս Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպան: Դեսպան Թրէյսին ԱՄՆ դիւանագիտական ծառայութեան աւագ քատրային դիւանագէտ է եւ Հայաստանի մէջ պիտի ներկայացնէ Միացեալ Նահանգներու նախագահը: Անհամբեր կը սպասենք անոր Երեւանի մէջ», - նշուած է ԱՄՆ դեսպանութեան էջին մէջ:

## Պոլսոյ Սուրբ Հրեշտակապետ Եկեղեցոյ Պատին Յայտնուած Են Ցեղապաշտական Բնոյթի Հերթական Գրառումներ



Ցեղապաշտական յարձակման թիրախ դարձած Պոլսոյ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցին

Պոլսոյ Պալատ թաղամասին մէջ գտնուող Սուրբ Հրեշտակապետ եկեղեցոյ պատին ցեղապաշտական բնոյթի գրառումներ յայտնուած են:

Այս մասին, ինչպէս կը հաղորդէ «Արմէնբրես»-ը, կը տեղեկանանք Թուրքիոյ մէջ գործող հայկական «Լոյս» ամսագրի պլոկէն:

Եկեղեցոյ կառավարող խորհուրդը դէպքի առթիւ հաղորդագրութիւն ներկայացուցած է ոստիկանութեան:

Հայոց պատրիարքութեան տարածած հաղորդագրութեան մէջ նշուած է, որ լիշեալ գրութիւնները անգլերէն եւ արաբերէն են:

Գրառում կատարած անձերու ինքնութիւնը դեռ չէ պարզուած:

Թուրքիոյ քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» Տիարպէքիրէն ընտրուած հայ պատգամաւոր Կարօ Փայլանը անդրադարձած է Պալատ թաղամասին մէջ հայկական եկե-

ղեցոյ վրայ եղած գրառումներուն:

Ան Twitter-ի իր էջին հետեւեալ գրառումը ըրած է.

«Պալատ Սուրբ Հրեշտակապետ հայկական եկեղեցին յայտնուած է ատելութեան թիրախ: Ամէն տարի բազմաթիւ եկեղեցիներ եւ սինակոկներ ատելութեան թիրախ կը դառնան: Ոչ միայն պէտք է պարզել, թէ ովքեր են այդ թշնամական պահուածքի հեղինակները, այլեւ պարզել, թէ ինչ ուժեր կանգնած են անոնց ետին»:

Պատգամաւորը ամփոփելով խօսքը նշած է. «Ամենակարեւորը այն է, որ պէտք է վերջ տալ ատելութիւն ծնող քաղաքականութեան»:

Նշենք, որ քրիստոնէական շինութիւններու եւ եկեղեցիներու պատերուն ատելութիւն պարունակող եւ ցեղապաշտական բնոյթի գրառումներ Թուրքիոյ մէջ յաճախ կը կատարուին:



# Լեւոն Տէր-Պետրոսեան. Իմ եւ Նիկոլ Փաշինեանի Յարաբերութիւնների Մասին

Գրեթէ օր չի անցնում, որ այդ յարաբերութիւնների մասին որեւէ «սենսացիոն» լուր, անհեթեթութիւն, ակնյայտ սուտ կամ հերիւրանք հրատարակ չենտուի: Սովորաբար ես դրանց չեմ արձագանքում եւ ուշադրութեան էլ չեմ արժանացնում: Միայն երբեմն, լրագրողների յամառութեանը չդիմանալով, հերքումներով հանդէս է գալիս իմ գրասենեակի մամուլային քարտուղարը:

Ի՞նչ պատճառով է, արդ, որ խախտելով իմ սովորութիւնը, այս անգամ որոշել եմ դրանց անդրադառնալ անձամբ: Հաւաստիացնում եմ՝ ո՛չ ամենեւին ինքնապաշտպանութեան, այլ բացառապէս Նիկոլ Փաշինեանին շինծու մեղադրանքների թիրախ չդարձնելու նկատառումով: Ուստի, մանր-մունր ցնդաբանութիւնները մի կողմ դնելով, կարեւոր եմ համարում հանրութեան ուշադրութիւնը հրահրել միայն Փաշինեանի քաղաքական ընդդիմախօսների եւ նրանց սպասարկող լրատուամիջոցների կողմից տարածուող հետեւեալ պնդումների վրայ: Եւ այսպէս.

1. Որպէս արեւմտափոխ ճշմարտութիւն է հրամցում այն յօրինուածքը, թէ իբր Նիկոլ Փաշինեանը իմ քաղաքական հոգեզաւակն է, իսկ ես՝ նրա կնքահայրը: Կատարեալ անհեթեթութիւն. 90-ական թուականներից սկսած մինչեւ 2000-ականի կէսերը Փաշինեանը, որպէս լրագրող, եղել է իմ ամենախիստ եւ անհաշտ քննադատներից մէկը: 2006-ին «Այլընտրանք» նախաձեռնութեան հիմնադիր կազմում ընդգրկուելուց յետոյ նա դադարեցրել է այդ քննադատական վերաբերմունքը: 2007-ին ընդգրկուել է 2008թ. նախագահական ընտրութիւնների իմ նախընտրական թիւում: Հսկայական աշխատանք է կատարել քարոզարշաւի ընթացքում, ինչը ակտիւօրէն շարունակել է ընդհատակում եւ բանտարկութեան ժամանակ հրատարակած ծանրակշիռ յօդուածներով: Նոյնպիսի նուիրումով ու ջանադրութեամբ մասնակցել է Հայ Ազգային Կոնգրեսի դաշինքի 2012թ. խորհրդարանական ընտրութիւնների քարոզարշաւին եւ ընտրուել ԱԺ պատգամաւոր նոյնանուն իմ բակցութեան կազմում: 2014-ին ՀԱԿ-ԲՀԿ-Ժառանգութիւն համագործակցութեան կայացումից յետոյ, նա խզել է իր յարաբերութիւնները Կոնգրեսի հետ եւ վերականգնել իր քննադատական մօտեցումը իմ նկատմամբ: Այս ամէնը նշանակում է, որ միայն հիւանդ ուղեղներում կարող էր ծնուել Փաշինեանի՝ իմ քաղաքական հոգեզաւակը լինելու ցնորալի գաղափարը:

2. Նիկոլ Փաշինեանը, իբրեւ-թէ, ամէն երեկոյ գանգահարում է ինձ եւ խորհուրդներ հարցնում: Նախ յիշեցնեմ, որ 2012թ. յետոյ ես Փաշինեանին հանդիպել եմ ընդամէնը մէկ անգամ, 2018 թուականի Յուլիսի 16-ին, ինչի մասին ՀՀ կառավարութեան մամուլային ծառայութիւնը հանդէս է եկել պաշտօնական հաղորդագրութեամբ: Դրանից յետոյ վարչապետի հետ ես որեւէ հեռախօսազրոյց կամ միջնորդների միջոցով որեւէ շփում չեմ ունեցել: Սոցիալական առիթով ակտիւորդ չեմ համարում շեշտել նաեւ հետեւեալ երկու հանգամանքները. ա. ես ընդհանրապէս խորհուրդ տալու սովորութիւն չունեմ, քանի որ համոզմունքս է, որ



դրանից աւելի անիմաստ գրադմունք գոյութիւն չունի: Իսկ երբ խորհրդի համար որեւէ մէկը ինձ է դիմում, ես բաւարարում եմ պարզապէս ինդիւի վերաբերեալ կարծիք յայտնելով, ոչինչ աւելի, եւ բ. եթէ ոմանց կարծիքով Փաշինեանին հնարաւոր է ուղղորդել խորհուրդներով կամ նրան ինչ-որ բան թելադրել, նրանք կամ չարաչար սխալուում են, կամ ընդհանրապէս այդ մարդուն չեն ճանաչում, կամ էլ նրա մասին դատում են սեփական հակումներով: Ես Փաշինեանից աւելի անկախ եւ ինքնաբաւ մարդու չեմ հանդիպել:

3. Ամենաինտենսիւ կերպով հնչեցուող բօթը, սակայն, այն պնդումն է, թէ իբր Նիկոլ Փաշինեանը ինձից որդեգրել է «տարածքներ խաղաղութեան դիմաց» բանաձեւը եւ իրականացնում է Ղարաբաղի հարցի կարգաւորման իմ «պարտադրական» ծրագիրը: Միանգամից նշեմ, որ ո՛չ ես, ո՛չ Փաշինեանը երբեւէ «տարածքներ խաղաղութեան դիմաց» բանաձեւը չենք օգտագործել: Դա բացարձակ հերիւրանք է, մոգոտուած չարակամների ու ձեռնածուների կողմից: Ինչ վերաբերում է դարաբաղեան կարգաւորման ծրագրին, ապա, ի

տարբերութիւն ՀՀ երեք նախագահների, Փաշինեանի ծրագիրը դեռեւս յայտնի չէ: Նա առայժմ բաւարարուել է միայն ինդիւի վերաբերեալ որոշ սկզբունքների, մասնաւորապէս, Ղարաբաղի անունից բանակցելու քոչարեանա-սարգսեանական դիրքորոշումից հրաժարուելու եւ ԼՂՀ-ի՝ որպէս լիբրալ հակամարտող կողմի երբեմնի կարգավիճակը վերականգնելու անհրաժեշտութեան շեշտադրմամբ: Անհրաժեշտ է աւելացնել նաեւ, որ դարաբաղեան կարգաւորման վերաբերեալ ինչպիսի ծրագրով էլ Փաշինեանը հանդէս գալ, դա լինելու է իր սեփական ծրագիրը, ինչպէս եղել է թէ՛ իմ, թէ՛ Քոչարեանի, եւ թէ՛ Սարգսեանի պարագայում: Հայաստանի իւրաքանչիւր առաջնորդ պատասխանատու է ի՛ր ծրագրի համար, որքան էլ այն ընդհանրութիւններ ունենայ նախորդների ծրագրերի հետ:

4. Հայ Ազգային Կոնգրեսի ս. թ. Փետրուարի 16-ի յայտարարութեան մէջ տեղ գտած սահմանադրութեան փոփոխութեան եւ կիսանախագահական կառավարման համակարգի վերականգնմանը վերաբերող առաջարկը, իբրեւ-թէ, փորձ է փրկելու Փաշինեանի կառավարութեան խախուտ դիրքը եւ եր-

կարաձգելու նրա իշխանութիւնը: Սրանով, ըստ էութեան, ճիգ է թափուում Կոնգրեսի առաջարկը դիտելու ոչ թէ որպէս կուսակցութեան սկզբունքային դիրքորոշում, այլ որպէս տուրք ընթացիկ քաղաքական կոնիւնկտուրային: Ըստ այդմ, դիտաւորութեամբ մոռացութեան է մատնում այն հանգամանքը, որ Կոնգրեսն իր բոլոր պաշտօնական ծրագրերում եւ յայտարարութիւններում մշտապէս դէմ է եղել Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի ներդրմանը եւ վճռականորեն պայքարել այդ ուղղութեամբ, հանրաքուէին մասնակցելով «ակտիւ Ոչ» քուէարկութեան կոչով: Այսօր էլ մենք գտնում ենք, որ կառավարման խորհրդարանական համակարգը Հայաստանի առջեւ կանգնած ներկայիս բազմաթիւ մարտահրաւէրների պարագայում ուղղակի փորձանք է մեր երկրի համար, որովհետեւ այն մշտական ցնցումների եւ սահմանադրական ճգնաժամերի աղբիւր է հանդիսանում: Այս առումով յատկանշական է, որ նոյնիսկ 1995թ. Սահմանադրութեան ամենաանհաշտ հակառակորդները 1998թ. իշխանափոխութիւնից եւ 1999թ. Հոկտեմբերի 27-ի ողբերգութիւնից յետոյ ընդունեցին, որ այդ վտանգաւոր ճգնաժամերը չաղթահարուեցին իրենց իսկ կողմից ժամանակին մերժուած Սահմանադրութեան շնորհիւ միայն: Չարմանալի է յատկապէս Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչների այսօրուայ դիրքորոշումը, կապուած Սահմանադրութեան փոփոխութեան Կոնգրեսի առաջարկի հետ: Այդ մարդիկ չեն հասկացել, որ թէ՛ իրենց կուսակցութիւնը, եւ թէ՛ իրենց առաջնորդը անցեալ Ապրիլին կործանուեցին, աւելի ճիշտ, ինքնասպանութիւն գործեցին հենց խորհրդարանական կառավարման ներդր-

Շար.ը էջ 18

«Կայծ» Երիտասարդական Միութիւնը ուրախ է տեղեկացնելու, որ Հայ-Ամերիկեան Խորհուրդի հետ համագործակցաբար կազմակերպած է պատանեկան գարնանային հաւաք մը, որ տեղի պիտի ունենայ Մարտ 29-էն մինչեւ Ապրիլ 1-ը, 2019:

Սոյն հաւաքը Անվճար է եւ 11-17 տարեկան տղաք եւ աղջիկներ հրաւիրուած են մասնակցելու անոր:

Ինչպէս ձեզմէ շատերուն ծանօթ են, «Կայծը» նուիրուած է հայկական ժառանգութեան պահպանման՝ հայ երիտասարդներու միջեւ յարաբերութիւններու ամրապնդման միջոցով:

Սոցիալ-Պեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հովանիին տակ 1910-ին հիմնուած մեր միութիւնը ունի երկար տարիներու պատմութիւն՝ մեր համայնքի կեանքէն ներս իր ներգրաւուածութեամբ եւ ընկերային ու քաղաքական գործունէութեամբ:

Հաւաքավայրը գտնուելով գեղատեսիլ Կանայ Լիճի շուրջ (Big Bear Lake-ի մօտ), կը հանդիսանայ լաւագոյն վայրը երիտասարդներու հայեացքները ընդլայնելու համար եւ հրաշալի հմարաւորութիւն կու տայ հայ պատանիներուն՝ ծանօթանալու իրենց ազգային ժառանգութեան, մշակոյթին, պատմութեան, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ առկայ հայկական հարցերուն եւ մեր հասարակութեան ներկայ իվիճակին: Լսելով այս նիւթերու մասին, անոնք ձեռք պիտի ձգեն խմբային հմտութիւններ եւ ստեղծեն երկարատեւ բարեկամութիւններ՝ այլ հայ երիտասարդներու հետ:

Պիտի խնդրենք որ, Ձեր զաւակները եւ կամ թոռնիկները արձանագրէք այս հաւաքին, կարելի եղած չափով շուտ, նկատի ունենալով որ տեղերը սահմանափակ են:

Արձանագրութեան եւ կամ յաւելելու տեղեկութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել 818-660-5142 թիւին եւ կամ կապուիլ էլեկտրոնային փոստով՝ info@ArmenianCouncil.org:



### Հայկական Նոր Ծաղկասայլը Պիտի Մասնակցի 2020-ի Փաստինայի Վարդատունին

Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութիւնը (American Rose Float Association) յայտարարեց, թէ հրաւեր ստացած է Փաստինայի Վարդատունի Ընկերակցութեան՝ հայկական նոր ծաղկասայլով մը մասնակցելու Յունուար 1, 2020-ին տեղի ունենալիք Փաստինայի Վարդատունին: Ասիկա պիտի ըլլայ վեցերորդ յաջորդական տարին, որ հայկական ծաղկասայլ մը հանդէս պիտի դառնայ Փաստինայի հռչակաւոր վարդատունին:



Հայկական ամենավերջին ծաղկասայլը, որ կը կրէր «Քարահունջ» թեման, նուիրուած էր հայ մշակուցի մեծութեան, եւ կ'արտացոլէր Փաստինայի 130-րդ Վարդատունի ընդհանուր թեման, որն էր՝ «Կեանքի Մեղեդին»: 2019-ի Նոր Տարուայ օրը, Փաստինայի մէջ մօտ 700,000 հանդիսատեսներ հետեւեցան վարդատունի երթին. իսկ պատկերասփիւռի եւ Համացանցի միջոցով ձեռնարկը դիտուեցաւ 140 երկիրներէ եւ հողատարածքներէ:

ընդհանուր թեման, որն է՝ «Յոյսի Ուժը»: Ըստ այնմ, Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութիւնը արդէն իսկ գործի լծուած է, նպատակ ունենալով ստեղծել հայկական յաջորդ ծաղկասայլի նախագիծը, ինչպէս նաեւ ապահովել հայ համայնքի նեցուկը՝ երաշխաւորելու համար ծաղկասայլի յաջողութիւնը: Ինչպէս անցեալ տարիներուն, Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութիւնը նոր վարչութիւն մը ընտրեց այս ամիս, եւ մեկնարկած է հանգանակութեան

Անցեալ ամիս, Փաստինայի Վարդատունի Ընկերակցութիւնը յայտարարեց 2020-ի վարդատունի

### Կլենտէլ Քաղաքի Salem Luther School

«Ըստ ինձի ո՞ր դպրոցը յաճախած ես, կ'ըսեմ քեզի, թէ ով ես դուն»

#### ԽԱՉԻԿ ԾԱՆՈՅԵԱՆ

Կլենտէլ քաղաքի մէջ 70 տարիէ ի վեր կը գործէ Լուտերական Եկեղեցւոյ պատկանող Սէյլըմ դպրոցը (Salem School):

Վարժարանը ունի մանկապարտէզէն մինչեւ միջնակարգ դասարաններ (Pre K.- 8<sup>th</sup> Grade), 4-14 տարեկաններու համար:

Լուտերական եկեղեցւոյ պատկանող այս դպրոցը, քրիստոնէական հաւատքի վրայ հիմնուած բարոյական շատ բարձր մակարդակով կը գործէ, աշակերտութեան բարձրագոյն ուսում տալով եւ գործածելով ուսումնական ամենէն արդիական մեթոտներ: Դպրոցը ունի կրօնական պաշտամունքի եկեղեցի մը, ուր շաբաթը անգամ մը բոլոր աշակերտներու մասնակցութեամբ հոգեւոր պահ մը կ'անցընեն:

Դպրոցը արժանացած է Կլենտէլ քաղաքի, Լոս Անձելոսի Գաւառի եւ Գալիֆորնիոյ նահանգի, ինչպէս նաեւ բազմաթիւ հոգեւոր եւ աշխարհիկ միութիւններու մեծարանքին եւ շքանշաններուն:

Սէյլըմ Լուտերական դպրոցը ծանօթ է իր փոքր թիւով աշակերտներ ունեցող դասարաններով, ուր ուսուցիչ-ուսուցչուհիները աւելի ուշադրութիւն կը դարձնեն եւ ժամանակ կը տրամադրեն աշակերտութեան ուսման վրայ: Բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիները իրենց հետ ունին մնայուն օգնական մը դասարանէն ներս:

Այդ դպրոցը ունի ուսուցչական հոյակապ կազմ մը, բոլորն ալ բարձրագոյն վկայականներու անձինք են եւ որակաւորում (Credential) ունեցող հրաշք ուսուցիչ-ուսուցչուհիներ են:

Դպրոցի աշակերտներուն 20-25 առ հարիւրը ծագումով հայ փոքրիկներ են, որոնք մեծագոյն հաճուցքով դպրոց կուզան եւ դպրոցը աւարտելէ ետք, կ'ընդունուին

նահանգի ամենէն բարձր համալսարանները եւ դպրոցները:

Դպրոցի արձանագրութիւնները սկսած են Մարտ 1-էն սկսեալ: Անոնք որոնք կը փափաքին իրենց զաւակները արձանագրել, փոքր թիւով աշակերտներ ընդունելու առիթ կայ:

Արձանագրութեան ատեն կարելի է յիշել, թէ այս գրութիւնը կարդացած էք եւ դուք պիտի արժանանաք 100 տոլար գեղջի արձանագրութեան գումարէն:

Դպրոցի հասցէն է՝  
1211 N. Brand Blvd.  
Glendale, CA 91202  
Tel. 818-243-8264

### Բանակի Օր Եւ Տեառնընդառաց Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթոյ Վարժարանին Մէջ

Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանը փետրուար ամսին մէջ տօնեց հայկական ԶՈՒ-ի Բանակի օրը եւ Տեառնընդառացը:

Առաջին տօնակատարութիւնը հայկական ԶՈՒ-ին նուիրուած Բանակի օրն էր: Աշակերտները 2 փետրուարին, շաբաթ կէսօրին հաւաքուեցան վարժարանի սրահին մէջ ու հիացումով դիտեցին բանակի երեւանեան տողանցքին տեսարաններ: Ո՛չ-հայկական վարժարաններ յաճախող եւ ծնողներուն մեծամասնութիւնը ԱՄՆ ծնած երեխաներու համար զինուոր եւ հրասայլ տեսնել, տողանցք դիտել, հանրապետութեան օրհներգին բացի զինուորական քայլերգ լսել բացառիկ երեւոյթ էր: Ապա անոնք դիտեցին սահիկներու պատկերազարդ ցուցադրութիւն մը: Իւրաքանչիւր սահիկ ունէր հայկական զինուած ուժերու վերաբերեալ վիճակագրական տուեալ մը: Վերջաւորութեան աշակերտները յոտնկայս երգեցին Հայաստանի Հանրապետութեան օրհներգը ու միաբերան շնորհակալութիւն յայտնեցին քաջ հայ զինուորին:



16 փետրուարին, Շաբաթ օր վարժարանը ապրեցաւ մէկ այլ խանդավառ օր- անոր աշակերտները միջօրէին տօնեցին Տեառնընդառացը, որ ժողովուրդին ծանօթ է նաեւ որպէս Տրնդեգ: Անոնք նախ

համախմբուեցան կրակին շուրջ, պարեցին հայկական շուրջպարը, ապա բարձր տրամադրութեամբ, մէկ առ մէկ անցան բոցերուն

վրայէն: Ամենափոքրիկ սանիկները գերծ չմնացին այս աւանդական արարողութեան: Անոնք աւագ քոյրեղբայրներու, կամ ուսուցիչներու ձեռքէն բռնած անցան կրակին վրայէն: Աւարտին վարժարանի տնօրէն Նորայր Տատուրեանը մաղթեց, որ բոլոր աշակերտներուն մէջ հայութեան ինքնութիւնը այդ կրակին պէս անմար մնայ:

**NEW FAMILIES RECEIVE \$100 OFF REGISTRATION**



**Accelerated academics and so much more!**

**Our kids are:**

- Leaders
- Initiators
- Communicators
- Respectful
- Creative
- Critical Thinkers
- Advanced Academically

**Contact us today for a tour of our campus**

sailemlutheranglendalechool.org | (818) 243-8264



**Igniting Leadership in the Next Generation!**

**Our Signature Leadership Program Includes:**

- Civics Programs
- Steven Covey's "Leader in Me"
- Peer Coaching
- Mentoring and Discipleship
- Entrepreneurship
- Service Opportunities
- Debate Team
- Student Council
- And more...



# Massis Weekly

Volume 39, No. 8

Saturday, March 2, 2019

## Defense Minister David Tonoyan: If Hostilities Resume Armenian Armed Forces Will Go on the Offensive

YEREVAN -- Armenian armed forces will go into the offensive if hostilities in Nagorno-Karabakh resume, defense minister David Tonoyan said in a televised interview.

"Psychology is changing; approaches are changing; defending armies are always defeated. We are not going to remain in defensive positions," the minister said yesterday in an interview with the Public Television of Armenia.

He said if there is a threat that hostilities will resume, Armenian armed forces will not linger. When asked if that means that the Armenian army will also go on the offensive, Tonoyan replied, "Why not?"

The minister agreed that Armenia has no opportunity to compete with Azerbaijan in terms of demography and economy; therefore, qualitative changes in the armed forces are necessary. He said the \$100 million loan provided by Russia for purchase of arms allows Ar-

menian armed forces to solve the problems without getting involved in a quantitative arms race.

Asked to comment on Tonoyan's statement, Taron Hovhannisyanyan, an expert on Azerbaijan, said Tonoyan in all likelihood had in mind preventive offensive actions, given the aggressive and unconstructive policy pursued by Azerbaijan that gives the Armenian side the right to take preventive actions.

According to the expert, preventive offensive actions do not always mean conducting hostilities in the enemy's territory. "This also means suppression of the enemy's main firing points with the help of long-range artillery systems," said Hovhannisyanyan.

He agreed that Armenia cannot compete with Azerbaijan in demographic and economic aspects; therefore, without a preemptive strike it will be more difficult to defend oneself in case of an attack

## Putin, Pashinyan Discuss Bilateral Relations and Regional Issues During a Phone Conversation



YEREVAN (RFE/RL) -- Russian President Vladimir Putin and Armenian Prime Minister Nikol Pashinyan discussed bilateral relations and regional security during a telephone conversation on Monday.

The Kremlin reported that the two leaders spoke about the "development of Russian-Armenian cooperation as

well as regional problems." It did not elaborate.

Pashinyan's press office also gave no details in a virtually identical statement on the phone call. "The interlocutors discussed various issues on the agenda of Russian-Armenian allied relations," it said.

Continued on page 2

## Armenia to Mark 11th Anniversary of March 2008 Victims with a Powerful Civil March



YEREVAN -- Prime Minister Nikol Pashinyan has called on all Armenians to mark the 11th anniversary of the deadly repression of the 2008 postelection protests with "a powerful civil march" in Yerevan.

Pashinyan said in his live video statement on Facebook on February 21 that the March 1 event will be held in downtown Yerevan and will be dedicated to "the victory of the Armenian Citizen."

"The march will be against violence, electoral fraud, corruption, lawlessness, and will prove that the victory of the Armenian citizen is irreversible.... We will honor the 10 people killed on March 1, 2008, as well as all the victims of political violence," Pashinyan said.

The march is scheduled to start at 6:30 p.m. local time, Pashinyan said.

On March 1-2, 2008, the Armenian government used force against opposition protesters who were challenging the

official results of a presidential poll officially won by Serzh Sarkisian, a close ally of the outgoing president, Robert Kocharian.

Eight protesters and two police officers were killed in clashes between security forces and protesters.

The former Armenian authorities accused the Ter-Petrosian-led opposition of organizing the "mass disturbances" in a bid to seize power. Dozens of Ter-Petrosian allies, including Pashinyan, were subsequently jailed on charges strongly denied by them.

Pashinyan became prime minister last year following peaceful protests that he spearheaded, ousting Sarkisian and severely weakening the establishment that had been in place in Armenia since Kocharian's rule.

Kocharian is currently under arrest. He was charged with illegally ordering security forces to use force against opposition supporters in 2008.

## Lynne M. Tracy Sworn in as US Ambassador in Armenia



WASHINGTON, DC -- Lynne M. Tracy was officially sworn in this week to serve as the Ambassador Extraordinary and Plenipotentiary of the United States of America to the Republic of Armenia. She is expected to arrive in Yerevan next week.

Lynne M. Tracy is a career member of the Senior Foreign Service and presently serves as the Senior Adviser for Russia in the Bureau of European and Eurasian Affairs at the Department of State. She has served in this position since 2017.

From 2014 to 2017 Ms. Tracy served as the Deputy Chief of Mission at Embassy Moscow, Russia. She served as Deputy Assistant Secretary for Central Asia in the Bureau of South and Central Asian Affairs from 2012 to 2014, and as Director for Central Asia at the National Security Council from 2011 to 2012. Other overseas assignments include Deputy Chief of Mission in Em-

bassy Ashgabat, Turkmenistan, Principal Officer in Peshawar, Pakistan, Principal Officer in Astana, Kazakhstan, Political Officer in Kabul, Afghanistan, Consular Officer in Bishkek, Kyrgyzstan, and Political/Consular Officer in Peshawar, Pakistan. Domestic assignments include Desk Officer for Kazakhstan and for Georgia in the Bureau of European and Eurasian Affairs, and Staff Assistant for the Special Envoy for the Newly-Independent States at the Department of State.

Ms. Tracy received a Distinguished Honor Award in 2017 for her performance as Deputy Chief of Mission in Moscow, and the Secretary's Award for Heroism in 2009 for her performance as Principal Officer in Peshawar. She speaks Russian. Ms. Tracy graduated from the University of Georgia with a B.A. in Soviet Studies in 1986. She graduated from the University of Akron, Ohio with a J.D. in 1994.

### Another Armenian Church Vandalized with Hate Graffiti in Turkey



ISTANBUL -- Another Armenian church in Istanbul, Turkey, has been vandalized with anti-Armenian graffiti, the Armenian Patriarchate of Constantinople said on Facebook.

Unknown perpetrators have spray painted hate graffiti in English and Arabic on the exterior wall of the Surp Hreshdagabet Armenian Church in the neighborhood of Balat.

The local council members reported Archbishop Aram Ateshian on the case of vandalism. The council also informed the security authorities on the incident.

This is not the first incident, in which Armenian institutions have been the target of graffiti and vandalism in

Istanbul in recent years.

Recently, the walls of the Armenian Surb Astvatsatsin Church in Istanbul's Zeinlik district were vandalized with hate graffiti.

In April 2018 photos of graffiti reading "This homeland is ours" spray-painted on the exterior wall of the Armenian Surp Takavor Church and a pile of trash dumped in front of the church's door began circulating on social media and various Turkish news outlets.

In 2016, the exterior walls of the Bomonti Mkhitarian Armenian School of Istanbul were vandalized with anti-Armenian graffiti reading "One night, we suddenly will be in Karabakh."

### Armenia, Georgia Sign Strategic Military Cooperation Program for 2019



YEREVAN -- Armenia and Georgia have signed a strategic cooperation program for 2019, Armenian Defense Minister Davit Tonoyan said Thursday at a joint news conference with his Georgian counterpart Levan Izoria.

During their meeting the ministers discussed Armenian-Georgian relationships, international and regional security issues, as well as bilateral cooperation in defence sector between the two countries. Based on the results of the meeting, the heads of military establishments of the two nations signed "Bilateral Cooperation Plan between the Ministry of Defence of the Republic of Armenia and the Ministry of Defence of Georgia for the year 2019".


The outcomes of discussions were summarized in official statements by Davit Tonoyan and Levan Izoria, which signified importance of millennia-long friendly relations between the two peoples and the need for enhancing bilateral cooperation in defence realm. Both ministers valued exchange of experience and best practices between Armenia and Georgia in the spheres of military educa-

tion, military medicine, professional Non-Commissioned Officer system, human rights and integrity building, as well as continued reciprocation of high-profile visits.

Touching upon the contribution of the two countries to international security missions, minister Izoria expressed hope that Armenian and Georgian units will continue joint participation in exercises held in multilateral formats. Minister Tonoyan, for his part noted that Armenia and Georgia are of crucial significance for each other in security, political, economic, and cultural domains, to name but a few, assuring that the two nations have mutual understanding of, and respect for one another's preferences and solutions they have come up with for protection of national security.

During the visit the delegation of Minister of Defence of Georgia visited "Tsitsernakaberd" Memorial and paid tribute of respect to the memory of canonized martyrs of Armenian Genocide. Levan Izoria's delegation then visited Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts.

### Armenia's Economic Activity Index Grows 6,1% in January



YEREVAN (Armenpress) — Armenia's economic activity index grew 6,1 % in January 2019 against the previous year's same month, according to the national statistical committee.

Construction growth was 22,1%. Electric-energy production dropped 26,3%, while service volume (excluding trade) grew 15,6%.

Consumer price index increased 0,6%, while the industrial product price index dropped 2,6%.

Trade turnover grew 19,3%.

The industrial output volume is 0,4% lower against the 2018 January indicator.

The average monthly nominal wage grew 4,1% (172,198 AMD). The average monthly nominal wage in the public sector grew 6,5%, amounting 149,399 AMD. In the private sector, it grew 1,8%, totaling 184,646 AMD.

Foreign trade turnover volumes dropped 7,6% in the reporting period (15,8% drop in exports and 3,3% drop in imports).

### Putin, Pashinyan Discuss

Continued from page 1

Putin and Pashinyan most recently met in Moscow on December 27. The talks focused, among other things, on a new price of Russian natural gas deliv-

ered to Armenia.

The two men held further discussions on the issue by phone in the following days. Russia's Gazprom giant announced a 10 percent rise in its gas price for Armenia on December 31.

### EU Envoy Sees 'Serious Progress' In Armenian Anti-Graft Fight

YEREVAN -- Armenia's current government has made "serious progress" in combatting corruption in the country but should not "rest on its laurels," a senior European Union diplomat said on Tuesday.

Piotr Switalski, the head of the EU Delegation in Yerevan, admitted that the reform-minded government is serious about its repeated pledges to eliminate corrupt practices.

"But political will, being the sine qua non element, is not enough," Switalski cautioned at a news conference. "You also need other elements such as institutions, laws and a social culture or environment."

"Regarding the institutions, we can see that the government wants to create a new, independent anti-corruption agency that will have wide-ranging powers," he said. He also praised the government's plans to enact anti-graft laws.

Switalski added that the EU stands ready to "help" the authorities in what he hopes will be a sustained and "long" campaign against corruption. "Don't rest on your laurels because the way [forward] is long," he said, appealing to them.

The number of high-profile corruption investigations launched by Armenian law-enforcement authorities has risen significantly since last spring's "velvet revolution." They have targeted former senior officials as well as former President Serzh Sarkisian's relatives.

Speaking in the parliament on February 12, Prime Minister Nikol Pashinyan declared that his administration has already "broken the spine of systemic corruption in Armenia." Pashinyan said it will now focus on putting in place "institutional" safeguards against the problem. In particular, he said, it will make information about the personal assets of individuals holding or aspiring to state posts easily accessible to the public.

Switalski made clear that the EU is also encouraged by other reforms initiated by Pashinyan's government and will reward them with greater financial assistance already this year. He cited statements to that effect made by Johannes Hahn, the EU commissioner for European neighborhood and enlargement negotiations.

Hahn hailed democratic change in Armenia when he visited Yerevan and met with Pashinyan late last month.

## Tigran Mansurian: A Symposium and Concert Celebrating his 80th Anniversary

This major milestone in the life and creative engagement of Armenia's foremost living composer is an occasion both for reflection on the musical path he has traversed as well as to revisit select works from his hauntingly diverse repertoire in performance at a day-long event at UCLA's Schoenberg Hall on March 6.

Born in Beirut, Lebanon, Mansurian resettled in Armenia with his family after World War II, where he began to study music, soon distinguishing himself as a representative of the avant-garde constellation of Soviet composers that included Arvo Pärt, Alfred Schnittke, and Valentin Silvestrov. That generation boldly experimented with styles emanating from Western Europe, before branching out to develop the individual approaches that characterize their mature work. Mansurian's complex evolutionary path thus becomes the subject of two round table discussions by musicologists, exploring first the vertical dimension of his affinities with the musical trajectory of his homeland, while at the same time situating his compositions horizontally within the broad spectrum of musical exchange between East and West in the modern and contemporary world. Presenters comprise Artur Avanesov (American University of Armenia, Yerevan), Elena Dubinets (Artistic Administrator of Seattle Symphony), Lisa Cooper Vest (University of Southern

California), Vatsche Barsoumian (Director of Lark Musical Society, Glendale), together with A.J. Racy (UCLA) and Ian Krouse (UCLA) in a conversation moderated by S. Peter Cowe (UCLA).

The Gala Concert to follow opens with a videoed message of congratulations by the President of the Armenian Republic and welcoming remarks by the Armenian Consul General in Los Angeles. The program embraces several of Mansurian's masterpieces, including the US Premiere of his acclaimed String Quintet, intercalated with compositions by his close friends Pärt, Schnittke, and Silvestrov. Featured guest artists include Principal Clarinetist of the Los Angeles Philharmonic and UCLA faculty Boris Allakhverdyan, Artur Avanesov (piano), VEM String Quartet, Danielle Segen (mezzo-soprano), Antonio Lysy (cello), Varty Manouelian (violin), Movses Pogossian (violin), Miroslava Khomik (violin), Tiffany Wee (violin), James Lent (piano), Michael Kaufman (cello), James Bass, and the Seraphic Fire/UCLA Ensemble Artists.

The symposium will take place in the Popper Theater (2-5:30 p.m.), while the concert will be held in the adjacent Schoenberg Concert Hall, beginning at 8 p.m. The program is FREE and open to the public. Refreshments will be served. Self-service parking is available at UCLA's Parking Structure #2.

## Towards Universal Health Coverage: Introduction of Social Health Insurance in Armenia

YEREVAN, Armenia—On February 13, 2019, the Turpanjian School of Public Health (SPH) of the American University of Armenia (AUA) organized a panel discussion with experts about how Armenia could implement social health insurance in the coming years.



The members of the expert panel included Arsen Torosyan, Minister of Health of the Republic of Armenia; Egor Zaitsev, World Health Organization (WHO) Representative in Armenia; Saro Tsaturyan, World Bank expert; Samvel Kharazyan, Asian Development Bank expert; and Arsen Davtyan, Deputy Minister of Health. SPH Dean Dr. Varduhi Petrosyan moderated the discussion.

Currently, the share of total health expenditure coming from public sources is extremely low in Armenia (around 15%)—the last place in the WHO European Region. This number suggests the urgent need to allot more public resources for protecting citizens from financial risks associated with obtaining health care services.

The invited experts shared their opinion on how Armenia could aspire to institute universal health coverage using social health insurance as a tool for reaching this goal. Universal health coverage refers not only to who is covered and what services they would receive, but also to the financial burden on citi-

zens. The experts emphasized the importance of improving the efficiency of the health system given the scarcity of resources and the value of social solidarity.

The audience included public health and medical professionals, students, faculty, researchers, representatives of private health insurance companies and the Central Bank of Armenia. The attendees shared their opinions on the topic of discussion and asked questions to the panel members. The discussion was very interesting, sometimes heated, and continued for about two and a half hours.

Dr. Petrosyan concluded the event with a quote from a world-known health economist Joseph Kutzin and colleagues' publication on lessons learned from successful health financing reforms: "What appears to matter most is whether the reforms explicitly address and resolve pre-existing forms of fragmentation and avoid creating new forms."

The panel discussion was broadcasted live on the SPH Facebook page. The video of the discussion is available here.

80th Anniversary Celebration

## TIGRAN SYMPOSIUM GALA CONCERT MANSURIAN

MARCH 6, 2019  
Schoenberg Hall, UCLA

Free Admission

### Symposium:

"East and West: Search for Meeting Point"

2:00pm - 5:30pm March 6th,

Jan Popper Theater, UCLA

## TIGRAN MANSURIAN

Armenia's foremost living composer's 80th anniversary is celebrated with a symposium.

Featured speakers: Composer/pianist Artur Avanesov (Armenia); Vice President of Artistic Planning for the Seattle Symphony, Elena Dubinets; Director of Lark Musical Society, Vatsche Barsoumian, musicologist Lisa Cooper Vest, (USC), and UCLA faculty, Ian Krouse, A. J. Racy, and Peter Cowe.

## GALA CONCERT

8:00pm March 6th, Schoenberg Hall

Featuring Mansurian's masterworks, including a US Premiere of a major chamber work, along with music of his close friends

Arvo Part, Alfred Schnittke, and Valentin Silvestrov.

Guest artists: Principal Clarinetist of the LA Philharmonic and UCLA faculty

Boris Allakhverdyan,  
Artur Avanesov (piano),

VEM String Quartet,

Danielle Segen (mezzo-soprano),

Antonio Lysy (cello),

Varty Manouelian (violin),

Movses Pogossian (violin),

Miroslava Khomik (violin),

James Lent (piano),

Michael Kaufman (cello),

James Bass,

and the Seraphic Fire/UCLA Ensemble Artists.

Sponsored by the Herb Alpert School of Music  
Co-sponsored by Narekatsi Chair in Armenian Studies

RSVP at <https://schoolofmusic.ucla.edu/>

## AESA Lecture Series: Armenia's Transition: Challenges and Opportunities for a Quantum Leap

GLENDALE--Armenian Engineers and Scientists of America (AESA) will present a lecture by Consul General of Republic of Armenia in Los Angeles Armen Baibourtian titled Armenia's Transition: Challenges and Opportunities for a Quantum Leap on March 7, 2019, 7:30 PM at the Armenian Society of Los Angeles, 117 South Louise Street, Glendale, CA 91205

The ramifications of the recent political transformation in Armenia will be discussed covering its entire spectrum. Against the background of emerged multiple challenges, the ways to address those will be outlined. Avenues for achieving an accelerated progress and qualitative leap in the political, social, economic, and socio-cultural realms are going to be highlighted, simultaneously assessing their feasibility.

Dr. Armen Baibourtian holds the position of Consul General of Armenia in Los Angeles since September 2018. He is a career diplomat and a scholar. He was Professor of Political Science at University of Massachusetts Amherst for five years (2014-2018). He worked earlier as Senior Adviser to the United Nations Resident Coordinator and UNDP Resident Representative in Armenia (2008-2013). In this capacity, he contributed to coordination of the work of twelve UN agencies on the country scale. He also taught at the EU founded Center for European Studies at Yerevan State University for five years (2009-2013).

Ambassador Baibourtian served twice as the Armenian Deputy Foreign Minister (1997-2000 and 2004-2008),



simultaneously being the Chief Negotiator with the European Union. Along with the U.S. Deputy Assistant Secretary of State, he co-chaired the U.S.-Armenia Security Dialogue. He also co-chaired bilateral Intergovernmental Commissions on Trade, Economic, Technological, Cultural, and Educational Cooperation with India and China. Ambassador Baibourtian had numerous top diplomatic assignments worldwide, including ambassadorship in India and, concurrently, Nepal, Sri Lanka, and Indonesia (2000-2004). He was also the Deputy Permanent Representative to the UN in New York (1993-1995) dealing with international peace and security issues at the UN Headquarters. He proudly holds the title of the first Armenian Consul General in Los Angeles (1995-1997).

Prof. Baibourtian holds two PhDs - in International Studies from Jawaharlal Nehru University (2010) and Modern World History from Yerevan State University (1990).

## Dr. Vahe Tachjian to Speak on "How We Lived: The Houshamadyan Project"

FRESNO -- "How We Lived: The Houshamadyan Project" will be the topic of a presentation by Dr. Vahe Tachjian, Director of the Berlin-based Houshamadyan Project. The talk will take place at 7:30PM on Monday, March 11, 2019, in the University Business Center, Alice Peters Auditorium, Room 191 on the Fresno State campus.

The lecture is part of the Spring 2019 Armenian Studies Program Lecture Series at Fresno State.

Houshamadyan was born from a simple and powerful idea: we should bring back to life the cities, towns and village in which Armenians lived in the Ottoman Empire by reconstructing our inheritance – the rich memory of the lives of our ancestors.

Houshamadyan is a non-profit organization founded in Berlin in 2010. The website [www.houshamadyan.org](http://www.houshamadyan.org) appears in three languages: Armenian, English and Turkish.

Alongside written articles, the Houshamadyan website uses a great variety of multi-media tools, such as musical recordings of historic value, oral history testimonies, old photographs, pictures, old film footage, maps, podcasts and so on. Every month, 3-4 new articles and new materials are added to the constantly growing website. More than 170 articles and family collections are already published.

Vahe Tachjian earned his Ph.D. in History and Civilisation at the École des Hautes Études en Sciences Sociales



(EHSS) in Paris. He is now the chief editor of the Berlin based Houshamadyan website. His main publications are: *La France en Cilicie et en Haute-Mésopotamie*. Paris, 2004; *Les Arméniens, 1917-1939: La quête d'un refuge*, Paris, 2007 (co-editor); *Ottoman Armenians: Life, Culture, Society*, Vol 1, Berlin, 2014 (editor), *Daily life in the Abyss: Genocide Diaries, 1915-1918*, New York/Oxford, 2017.

The lecture is free and open to the public. Parking is available in Fresno State Lots P6 and P5, near the University Business Center, Fresno State. A free parking code can be obtained by contacting the Armenian Studies Program.

For more information about the lecture please contact the Armenian Studies Program at 278-2669, visit our website at [www.fresnostate.edu/armenianstudies](http://www.fresnostate.edu/armenianstudies) or visit our Facebook page at @ArmenianStudiesFresnoState.

## Armenian Rose Float to Participate in 2020 Pasadena Tournament of Roses

LOS ANGELES – The American Armenian Rose Float Association (AARFA) has announced that it has been invited by the Pasadena Tournament of Roses Association to present a new Armenian rose float at the next Pasadena Tournament of Roses, on January 1, 2020. This will be the sixth consecutive year that an Armenian rose float will participate in the world-renowned event.

The most recent Armenian rose float, which carried the theme "Chanting Stones: Karahunj," celebrated the greatness of Armenian culture, echoing the general theme of the 130th Pasadena Tournament of Roses, "The Melody of Life." On New Year's Day, 2019, the Pasadena Tournament of Roses was seen by close to 700,000 spectators in Pasadena, as well as a global audience in 140 countries and territories.

Last month, the Pasadena Tournament of Roses Association announced the 2020 tournament's general theme, which is "The Power of Hope." Accordingly, the AARFA is already at work, seeking to conceive the design of the next Armenian rose float and mobilize the Armenian community for ensuring the float's success. As in the past, the AARFA elected a new Board this month, and is initiating a new campaign for rallying grassroots support.

The Armenian rose float was launched in 2014. One of its major proponents was Stepan Partamian, a founding member of the AARFA who has served on its Board ever since its estab-



lishment that year. Partamian stepped down from the AARFA Board this month, as he plans to move to Armenia in June and focus on developing his Genolive project.

"Today, as our vision of participating in the Pasadena Tournament of Roses has become a wonderful reality, I am turning to my next major project, the Genolive initiative, confident that the newly-elected Board of the AARFA will do a marvelous job," Partamian said.

"To date, we have successfully showcased five Armenian floats, with the help of all our benefactors and volunteers. Let's keep it going," said Arthur Kokozyan, a member of the AARFA Board.

Toward the implementation of the 2020 Armenian rose float, tax-deductible contributions can be made online at [www.aarfa.org](http://www.aarfa.org) or sent to the following address: American Armenian Rose Float Association, P.O. Box 60005, Pasadena, CA 91116.

## AMAA Child and Orphan Care Committee Luncheon and Fashion Show

The AMAA Child and Orphan Care Luncheon and Fashion Show is going to be absolutely fabulous this year! Once again, it will be at the world renowned Beverly Hills Hotel on Saturday, March 23<sup>rd</sup> at 11:00 a.m. This year's event proceeds will benefit child and orphan care programs in Armenia and Karabagh.

The fashion show will feature fashions from *Bloomingdale's* for our children models and haute couture dresses by our visiting Armenian designer *Closh* from Istanbul for our older models ([www.closhbutik.com](http://www.closhbutik.com)). This year's show is going to be spectacular, filled with surprises and our beautiful models and handsome young gentlemen, who are excited and ready to walk the runway to our guests' delight.

If you have a child model who would like to join the fashion show for *Bloomingdale's* fashions, please contact us immediately. The luncheon chairs, Sandra Kalemkarian, Gina Felikian and Diane Cabraloff are working away feverishly to make this luncheon a huge success and would be honored to have your child model this year's incredible fashions!

The silent auction committee, led by Nicole Nishanian and Leslie Shahinian, has procured some of the most beautiful items, experiences and adventures!

And once again, we will have ex-

clusive gift bags for you each to take home, donated by vendors who have each graciously come forward with exclusive items for our guests. We cannot wait to see our attendees' reactions at all the goodies on their individual chairs!

And did we mention that *Closh* will be available for appointments to make you a very unique haute couture dress? A percentage of all sales will be dedicated to our programs in Armenia and Karabagh.


Yes! It will be a fantastic and very special event.. one not to miss.

In 2018, your generous donations have helped to facilitate the sponsorship of 1,663 children, support 6 kindergartens in Armenia and Karabagh, support of 5 Shogh community-based educational day centers in Yerevan, Vanadzor, Gyumri, Askeran and Shushi, provide summer and day camp experiences for nearly 5000 children and youth, provide Christmas programs at 42 locations, including gift packages for 7,200 children, offer various art, sports, theater and tutoring classes for 1,500 children, and assist needy families with relief packages and provide medical and dental care to over 6,000 children.

For reservations and further information, call Sandra Kalemkarian at (626) 945-6395 or Diane Cabraloff at (310) 729-1552



# Ծաղկածորի Պիոներական ճամբարները Դարձել են Պաշտօնեաների ու Գործարարների Սեփականությունը



## ՏԻՐԱՅՐ ՍՈՒՐԱԴԵԱՆ, ՔՐԻՍՏԻՆԷ ԱՂԱԼԱՐԵԱՆ, ՍԱՐՕ ԲԱՂՂԱՍԱՐԵԱՆ

Պատմական թուրքից երկու տարի անց՝ 1965 թվականին, առաջին կին տիեզերագնաց Վալենտինա Տէրեշկովան այցելեց Հայաստան: Նա եղաւ նաեւ Ծաղկածորի պիոներական ճամբարներից մէկում, որից յետոյ այդ ճամբարն անվանակոչուեց առաջին կին տիեզերագնացի պատուին:

Առաջին պիոներական ճամբարը բացուել է 1924 թ.-ին՝ Դարաչի-չակում (Ծաղկածոր): Պիոներական ճամբարները 7-ից 15 տարեկան պիոներների եւ դարձողականների դաստիարակչական առողջարարական հիմնարկներ էին, որոնք արհմիութեան, կոմերիտմիութեան, տնտեսական կազմակերպութիւնների, կոլտնտեսութիւնների, առողջապահութեան ու ժողովրդութեան մարմինների, ֆիզիքական կուլտուրայի եւ սպորտի ու այլ գերատեսչութիւնների հետ կազմակերպում էին երեխաների ամառային եւ ձմեռային հանգիստը:

Խորհրդային տարիներին Ծաղկածորում գործել է 22 պիոներական ճամբար, որտեղ յաճախել են երեխաներ Հայաստանի տարբեր վայրերից: ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ ճամբարների շէնք-շինութիւնները եւ հողակտորները զանգուածաբար սեփականաշնորհուեցին: Հիմնականում դրանց տէրերը դարձան պաշտօնատար անձինք եւ խոշոր գործարարները:

Ճամբարները, մեծ մասամբ, պետական որեւէ հիմնարկութեան էին պատկանում, իսկ դրանք սեփականաշնորհողները տուեալ գերատեսչութիւնում բարձր պաշտօն գրադեցնող անձինք են եղել: Պիոներական գրեթէ բոլոր ճամբարների տեղում այսօր հիւրանոցներ են եւ հանգստի գոտիներ, մէկ-երկուսը անմխիթար վիճակում են:

Ճամբարների սեփականատէրեր են դարձել ԱԺ պատգամաւոր Գագիկ Ծառուկեանը, ԴԱՀԿ ծառայութեան նախկին պետ Միհրան Պողոսեանը, կադաստրի կոմիտէի նախագահի նախկին տեղակալ Դաւիթ Սեդրակեանը (Մհեր Սեդրակեանի որդին), Ծաղկածորի քաղաքապետ Արթուր Յարութիւնեանը, Ծաղկածորի նախկին քաղաքապետ Գարուն Միրզոյեանի եղբայրը, տրանսպորտի եւ կապի նախկին փոխնախարար Վրոյր Առաքելեանը, ՊԵԿ նախագահի նախկին տեղակալ տիգրան Բարսեղեանը, Երեւանի նախկին քաղաքապետ Տարօն Մարգարեանի ազգականը՝ Կարէն Մարգարեանը, գործարար Խաչատուր Սուքիասեանի ընտանիքը եւ այլք:

Կադաստրի կոմիտէից եւ Ծաղկածորի քաղաքապետարանից ստացուած տեղեկատուութեան հիման վրայ «Հետք»-ը կարողացաւ պարզել, թէ նշուած 22 ճամբարն ում է վաճառուել, եւ այսօր ովքեր են դրանց սեփականատէրերը: Չնայած օտարուած պետական գոյքի մեծ մասը վաճառուել է հէնց Տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարութեան՝ պետական գոյքի կառավարման կոմիտէի իրաւանախորհրդների կողմից, սակայն կոմիտէից հնարաւոր չեղաւ պարզել, թէ ինչ գնով են վաճառուել ճամբարները (1, 2):



## «Վ. Տէրեշկովայի» եւ «Պ. Սորոգովի» Անուան Պիոներական ճամբարներ. «Մուլտի Ռեստ Հաուս»

Պիոներական հերոս Պաւել Սորոգովի եւ աշխարհի առաջին կին տիեզերագնաց Վալենտինայ Տէրեշկովայիանուններով Ծաղկածորում կառուցուած պիոներական ճամբարները մասնաւորեցուեցին եւ մինչեւ 2004-ը: «Տէրեշկովայի» անուան պիոներական ճամբարը պատկանում էր

Երեւանի կոմունալ տնտեսութեան նախարարութեանը: Ճամբարը տեղակայուած էր քարաշէն 3 մասնաշէնքում:

«Սորոգովի» անուան պիոներական ճամբարը պատկանում էր Երեւանի մետաքսի կոմբինատին, տեղակայուած էր փայտաշէն եւ քարաշէն տնակներում:

Կառավարութիւնը 2002 թ. թոյլ է տուել գոյքի գնի 25 տոկոսի չափով՝ 12 մլն. դրամով մասնաւորեցնել «Տէրեշկովայի» անուան ճամբարը, որը ձեռք է բերել «Մուլտի էյր» Սպը-ն: Գոյքը յետագայում դարձել է «Մուլտի Ռեստ Հաուս» Սպը-ի սեփականութիւնը: Ընկերութեան կանոնադրական կապիտալը 537 մլն դրամ է: Միակ բաժնետէրը ԱԺ պատգամաւոր, ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանն է:

«Սորոգովի» անուան պիոներական ճամբարի մասնաւորեցման մասին կադաստրային գործում տուեալներ չկան, ուստի պարզ չէ, թէ ինչ գնով է այն օտարուել Գագիկ Ծառուկեանի ընկերութեանը:

2007 թ. պիոներական ճամբարների տեղում վեր է խոյացել «Մուլտի Ռեստ Հաուս» հիւրանոցն՝ իր քոթեջներով: Հիւրանոցի եւ քոթեջների կառուցման ժամանակ բազմաթիւ ծառեր են հատուել: «Հետք»-ը 2004 թ.-ին անդրադարձել է հիւրանոցի կառուցմանը:



## «Նելսոն Ստեփանեանի» Անուան Պիոներական ճամբար. «Ոսկու Աշխարհ»

Գագիկ Ծառուկեանի հետ է կապուած նաեւ ԽՍՀՄ հերոս «Նելսոն Ստեփանեանի» անուան ճամբարի մասնաւորեցման գործընթացը: Անուանի հայ օդաչուի անունը կրող ճամբարը պատկանում էր Քաղաքացիական աւիացիայի վարչութեանը: Տեղակայուած էր 4 քարաշէն մասնաշէնքում: 1999 թ. ճամբարը եղել է «հայկական աւիաուղիներ» Պիքը-ի սեփականութիւնը, իսկ 2003 թ. օտարուել է ծառուկեանին պատկանող «Մուլտի էյր» Սպը-ին: Մի քանի այլ սեփականատէր փոխելով՝ ճամբարի շէնքերը դարձել են «Վաղարշ եւ որդիներ կոնցեռն» Սպը-ի սեփականութիւնը: Ընկերութեան ներկայիս բաժնետէրերն են «Ոսկու աշխարհ»-ի սեփականատէր Վաղարշակ Աբրահամեանն ու կինը՝ Նունէ Նալբանդեանը՝ համապատասխանաբար 32 եւ 68 տոկոս մասնաբաժիններով:




## «Գայի» Անուան Պիոներական ճամբար. «Կեչառիս Գարդենս»

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայութեան նախկին պետ Միհրան Պողոսեանի անուան հետ են կապուած «Գայի» ճամբարի տեղում կառուցուած «Կեչառիս Գարդենս» քոթեջները: Ճամբարը պատկանել է Երեւանի հաստոցաշինական արտադրական միաւորմանը: Այն տեղակայուած է եղել փայտաշէն եւ քարաշէն տնակներում:

1995 թ.-ի սեփականաշնորհման պայմանագրի հիման վրայ 2010 թ. ճամբարը դարձել է «Երեւանի հաստոցաշինարարական արտադրական միաւորում» ԲԲԸ-ի սեփականութիւնը: 2011 թ. աճուրդով ճամբարը վաճառուել է Կարինէ Էլչիբեկեանին եւ Մարգարիտա Թերզեանին: Կարինէ Էլչիբեկեանին է պատկանում «սենատոր» խոյատուենը: 2014 թ. ճամբարը դարձել է Գագիկ Սամուէլի Բաղդաւեանի սեփականութիւնը: Գագիկ Բաղդաւեանը «Քեթրին գրուպ» Սպը-ի սնորհէն է: Իսկ «Քեթրին գրուպ»-ի հիմնադիրը հանրութեանը քաջ յայտնի ԴԱՀԿ ծառայութեան նախկին պետ միհրան Պողոսեանն է: Քոթեջները գտնուում են Ծաղկածորի

# Ծաղկածորի Պիոներական ճամբարները Դարձել են Պաշտօնեաների ու Գործարարների Սեփականությունը

«Կեչառիս» հիւրանոցի յեռնամասում, իսկ հիւրանոցը, ինչպես արդեն գրել ենք, պատկանում է նույն Միհրան Պողոսեանին: Միայն թէ գրանցուած է նրա ազգականի՝ էդուարդ Յարութիւնեանի անունով: Վերջինս նաեւ «Բեստ ռէսթ» ընկերութեան տնօրէնն էր, որի բաժնետէրերն էին Միհրան Պողոսեանին պատկանող եւ Պանամայում գրանցուած երկու ընկերութիւնները:



## «Պլաստիկ» ճամբար. «Kecharis Villages» Քրօքշնէր

Ծաղկածորի Կեչառիս հիւրանոցից, «Կեչառիս գարդենս» քրօքշնէրից բացի՝ Միհրան Պողոսեանին է պատկանում նաեւ «Kecharis Villages» հանգստի գոտին: 4 քրօքշնէր բաղկացած հանգստավայրը տեղակայուել է «պլաստիկ» պիոներական ճամբարի տեղում: Ծամբարը պատկանում էր էջմիածնի պլաստմասսայի գործարանին: 1998 թ. ճամբարը դարձել է «էջմիածնի պլաստմասսաների գործարան» ԲԵՐ-ի սեփականութիւնը: Ընդամենը երկու տարի անց ընկերութիւնը սնանկ ճանաչուեց, իսկ գոյքը հանուեց հարկադիր աճուրդի: 2010 թ. Ծաղկածորում տեղակայուած պիոներական ճամբարը գնում է ոմն Գէորգ Թերզեան, որը, «դատաւէքս» տեղեկատուական համակարգի տուեալները համաձայն՝ յաճախ է հարկադիր աճուրդով գոյք գնել եւ շատ չանցած՝ վաճառել: Այդ նույն ժամանակահատուածում Միհրան Պողոսեանը Հայաստանի գլխաւոր հարկադիր կատարողն էր: Գէորգ Թերզեանը կապ ունի «Գազ փարթ» Սպը-ի հետ, որն էլ շահագործում է Երեւան քաղաքի Տէրեան փողոցում տեղակայուած արաբական ռեստորանը: Այդ մասին տեղեկանում ենք Պեկի գանգատարկման յանձնաժողովի արձանագրութիւնից:

2013 թ. գրաւի պայմանագրի հիման վրայ Գէորգ Թերզեանը ճամբարի գոյքը գրանցել է Միհրան Պողոսեանի հիմնադրած «Ֆրուտի-մէքս» Սպը-ի անունով, որն էլ փոխանցել է գոյքը «Կեչառիս» Սպը-ին, իսկ վերջինս այն վաճառել է «քեթրին գրուպ» ընկերութեանը: Արդէն վերեւում նշեցինք, որ «քեթրին գրուպ»-ը հիմնադրել է Միհրան Պողոսեանը:

Այս քրօքշները 1-2 օրով վարձակալելու համար պէտք է համաձայնութիւն ստանալ եւ վճարումներ կատարել «Կեչառիս» հիւրանոցում, ինչը նշանակում է, որ դրանք փոխկապակցուած բիզնէսներ են:



## «Ակադեմիայ» Պիոներական ճամբար. «Թեղեմիս» Յանգստի գոտի

Փայտաշէն տնակներում տեղակայուած «ակադեմիայ» պիոներական ճամբարը պատկանում էր Գիտութիւնների ակադեմիային: Ծամբարի տեղում այժմ գործում է «Թեղեմիս» հանգստեան գոտին, որը բաղկացած է 25-ից աւելի քրօքշներէրից: 2005 թ. բաժանման յատկազօծի հիման վրայ գրանցուել է «Հայաստանի Ազգային օլիմպիական կոմիտէ իրաւաբանական Դաւեան»: 2009 թ. ճամբարի գոյքը նա նուիրել է էդգար Կառլենի Նահապետեանին: Վերջինս էլ 2013 թ. անշարժ գոյքը նուիրել է Դաւիթ Սեդրակեանին: Սեդրակեանը ԱԺ նախկին պատգամաւոր Մհեր Սեդրակեանի որդին է: Դաւիթ Սեդրակեանը նուէրը ստանալու ժամանակ երեւանի աւագանու անդամ էր: Յետագայում Դաւիթ Սեդրակեանը դարձաւ Կադաստրի կոմիտէի նախագահի տեղակալ եւ պաշտօնավարեց մինչեւ 2017 թուականի Փետրուարը: այժմ ճամբարի տարածքում 25-ից աւելի քրօքշ կայ, որոնք պատկանում են տարբեր անձանց:



## «Տիեզերք» Պիոներական ճամբար. «Սփլենդը» Յանգստի գոտի

Երեւանի կօշիկի «Նայիրի» արտադրական միաւորմանը պատկանող «Տիեզերք» պիոներական ճամբարը տեղակայուած էր փայտաշէն տնակներում: Այսօր ճամբարի տեղում կառուցուել է «Սփլենդը» հանգստի գոտին՝ 9 քրօքշով եւ ռեստորանով: 1998 թ. «Ֆէն գոյքի իրացման գործակալութիւն» Պիբը-ն ճամբարի տարածքը վաճառել է Վաղինակ Աւագեանին, որն էլ այն 2003-ին վաճառել է Տարիել Բարսեղեանին: Տարիել Բարսեղեանն էլ գոյքը նուիրել է «տիմմօ» Սպը-ին, որն էլ շահագործում է «սփլենդը» հանգստի գոտին: «տիմմօ» Սպը-ի բաժնետէրը «բիմմօ» Սպը-ն է, վերջնական բաժնետէրը Տարիել Բարսեղեանի որդին է՝ ՀՀ անդամ տիգրան Բարսեղեանը, որը նախ ՊԵԿ նախագահի, այնուհետեւ Ֆինանսների նախարարի նախկին տեղակալն էր: 2000-2003 թթ. Տիգրան Բարսեղեանը ՀՀ նախագահի աշխատակազմում էր՝ պետաիրաւական վարչութեան պետի տեղակալ: 2003-2008 թթ. ՀՀ կառավարութեան աշխատակազմում իրաւաբանական վարչութեան պետ էր: Այսինքն՝ երբ Տարիել Բարսեղեանը ձեռք է բերել այս գոյքը, որդին պետական պաշտօն էր զբաղեցնում:

Տարիել Բարսեղեանը, ով նախկինում է բաժնետէր եղել եւ այժմ էլ տնօրէնն է, իրաւաբանական գիտութիւնների դոկտոր, պրոֆէսոր է, ՀՀ գերագոյն դատարանի նախագահն է եղել 1990-99 թթ., Արդարադատութեան խորհրդի իրաւաբան գիտնական անդամ՝ 2008-2013 թթ.:



## «Ծաղկահովիտ» Պիոներական ճամբար. «Ծաղկահովիտ» Յանգստի գոտի

Երեւանի թիւ 2 տաքսամոտորային պարկին պատկանող «ծաղկահովիտ» պիոներական ճամբարի մի մասը ձեռք է բերել այդ տարիներին ՀՀ տրանսպորտի եւ կապի փոխնախարար հրանտ Բեգլարեանը: Հիմա տեսնենք, թէ ինչպէս է դա տեղի ունեցել:

«Ծաղկահովիտ» պիոներական ճամբարը տեղակայուած էր երկու քարաշէն մասնաշէնքում: ՀՍՍՀ մինիստրների Սովետի 1966 թ. որոշման հիման վրայ ճամբարը 2001 թ. գրանցուել է «Ծաղկահովիտ» ճամբար Պիբը-ի անունով: ճամբարի գոյքը բաժանուել է 3 մասի: Մէկը 0.8 հա է, միւսը՝ 0.5 հա, երրորդը՝ 1.4 հա: Առանձնացուած գոյքերից 0.8 հեկտարը պատկանում է «Ծաղկահովիտ» Սպը-ին, իսկ 0.5 եւ 1.14 հան պատկանում է «Բնութեան հրաշք» ՓԲԸ-ին:

2001 թ. ճամբարի ամբողջ գոյքը գրանցուել է «Ծաղկահովիտ» ճամբար Պիբը-ի անունով: 2002թ. ճամբարի գոյքն աճուրդով վաճառուել եւ դարձել է Վրէժ Խաչատրեանի սեփականութիւնը: Վերջինս էլ գոյքը վաճառել է «բնութեան հրաշք» պանսիոնատ Սպը-ին: Այս ընկերութիւնն էլ գոյքը բաժանել է երկու մասի եւ նորից գրանցել իր անունով: Յետագայում «բնութեան հրաշք» պանսիոնատ Սպը-ն փոխանցման ակտի հիման վրայ գոյքը փոխանցել է «բնութեան հրաշք» ՓԲԸ-ին:

Ծաղկահովիտ հանգստեան տունը շահագործում է «ծաղկահովիտ»







### Լեւոն Տէր-Պետրոսեան

Շարունակուած էջ 6-էն

ման պատճառով: Գաղտնիք չէ, որ անցումը խորհրդարանական կառավարման համակարգին ոչ թէ Հանրապետականի եւ նրա դաշնակից կուսակցութիւնների սկզբունքային մօտեցման արտայայտութիւնն էր, այլ նախկին Սահմանադրութեամբ Սերժ Սարգսեանի երրորդ անգամ ընտրուելու արգելքի յաղթահարման ձգտումը: Գաղտնիք չէ նաեւ, որ այդ Սահմանադրութիւնը կապուած էր բացառապէս վերջինիս համար: Եթէ Սահմանադրութիւնը չփոխուէր եւ անցկացուէին նոր նախագահական ընտրութիւններ, ապա քոչարեանա-սարգսեանական վարչախմբի դէմ կուտակուած համաժողովրդական ատելութեան մթնոլորտում, միեւնոյն է, նախագահ էր ընտրուելու Նիկոլ Փաշինեանը, քանի որ դա նրա աստեղային ժամն էր եւ գործող իշխանութիւնը երկրորդ «Մարտի 1» չէր կարող անել: Այդ պարագայում 2017թ. ընտրուած խորհրդարանը չորս տարի ժամանակ կ'ունենար պահպանելու իր կազմը, ինչը նշանակում է, որ ՀՀ-ն եւ իր դաշնակից կուսակցութիւնները, մեծամասնութիւն ունենալով, լուրջ հակակշիռ կը դառնային Նախագահի համար եւ այսօրուայ լուսանցքային վիճակում չէին յայտնուի:

5. Փաշինեանի եւ իմ սերտ համագործակցութեան ապացոյց է համարվում նաեւ այն, թէ իբր կառավարութիւնում որոշ պաշտօնների են նշանակուած Հայ Ազգային կոնգրեսի անդամներ: Փոյթ չէ, թէ խօսքը վերաբերում է ընդամէնը մէկ մարդու՝ վարչապետի մամուլի քարտուղար Վլադիմիր Կարապետեանին: Վերջինս, իր իսկ կայտարարութեամբ, կասեցրել է կուսակցական գործունէութիւնը, ինչը բացարձակապէս անելորդ է դարձնում ԲՊ-ի եւ կոնգրեսի մի-

ջեւ սերտ համագործակցութեան մասին ցանկացած խոսակցութիւն: Այս կապակցութեամբ ուզում եմ ամենայն յստակութեամբ արձանագրել հետեւեալը: Հայ Ազգային կոնգրեսը Նիկոլ Փաշինեանի յաղթանակի կերտմանը մասնակցութիւն չի ունեցել, չհաշուած մեր կուսակցութեան մի մասի ներկայութիւնը նրա կազմակերպած համաժողովրդական երթերում եւ հանրահաւաքներում: Այնպէս որ, մենք Փաշինեանի յաղթանակի «տորթից» բաժին չենք ակնկալում: Դրա հետ մէկտեղ բազմիցս յայտարարել ենք, որ ամէն ինչով պատրաստ ենք աջակցելու ՀՀ նոր իշխանութիւններին՝ մեր երկրի բարգաւաճմանը եւ զարգացմանը միտուած բոլոր ջանքերին:

Ակնյառ է, որ վերոյիշեալ եւ նմանատիպ այլ անհեթեթութիւնների, ստերի եւ հերիւրանքների տարածումը դեկավարում է ժողովրդից թալանուած հակայական ֆինանսական եւ մետա-ուսուրաների տիրապետող մէկ կեղծոնից, որի նպատակն է ցանկացած գնով արդարադատութիւնից փրկել «Մարտի 1»-ի ոճրագործութեան գլխաւոր պատասխանատուներին եւ, օգտուելով գործող իշխանութեան անխուսափելի սխալներից ու բացթողումներից, դժգոհութեան ալիք բարձրացնել նրա դէմ եւ պերմանենտ ցնցումների միջոցով տապալել այն ու վերականգնել աւազակապետական վարչակարգը, հոգ չէ, թէ դրա հետեւանքով կը կործանուեն Ղարաբաղն էլ, Հայաստանն էլ: Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգային դաւաճանութիւն: Պարտուած վարչախումբը, փաստօրէն, պատերազմ է յայտարարել Հայ ժողովրդին եւ նրա ընտրած իշխանութեանը: Ուստի, ժողովրդի պարտքն է ընդունել այդ մարտահրաւէրը եւ ուժփին հակահարուած տալ հակապետական ուժերին:

### Հարցազրոյց Բարգէն Տէր Գրիգորեանի հետ

Շարունակուած էջ 7-էն

Սա մէկ անձի ինստիտուտ չէ, սա Հայաստան-սփիւռք շարաբերութիւնների նոր փուլ է՝ աւելի մեծ պատասխանատուութեամբ եւ առաջնահերթութիւններով: Սա ենթադրում է, որ մէկ նախարարութիւն կամ գրասենեակ չէ, որ պէտք է զբաղուի սփիւռքի հետ, սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետութեան ամբողջ կառավարութիւնն է զբաղուելու սփիւռքի հետ: Գործող բոլոր նախարարութիւնները ու առաջիկայում ստեղծուելիք յանձնակատարի գրասենեակը, բոլորը զբաղուելու են սփիւռքի հետ:

- Մամուլը գրում է, որ սփիւռքի

գործերի գլխաւոր յանձնակատարի համար թե՛ պայքար է ընթանում: «Պայքարողների» մէջ նաեւ Ձեր անունն է նշուում: Արդէն կա՞յ որոշում, թե ով կը լինի գլխաւոր յանձնակատարը: Դուք Ձեզ տեսնո՞ւմ էք այդ պաշտօնում:

- Եթէ որոշում լինէր, մամուլը, կարծում եմ, ամենաառաջինը կ'իմանար այդ մասին: Յանձնակատարի պաշտօնում նշանակուելու առաջարկ չեմ ստացել: Ամէն պարագայում պատրաստ եմ ծառայել պետութեանը, ներդնել իմ փորձը, գիտելիքներն ու ջանքերը Հայաստանի Հանրապետութեան զարգացման գործում, որտեղ ինձ տեսնի իմ քաղաքական թիմը:



**Legacy Realty**  
**Nick Karasarkisian**  
 Broker - CalBRE # 01022153  
 2275 Huntington Dr., #117  
 San Marino, CA 91108  
 Phone: 213.706.9990  
 e-mail: nickkarasarkisian@gmail.com  
 www.legacyrealtyca.com




### Ծաղկածորի Պիոներական ճամբարները

Շարունակուած էջ 15-էն

Սպըն (Նախկինում՝ «ակմելլայ», 2003-2006-ին՝ «բնութեան հրաշք» պանսիոնատ ՍՊԸ): Ընկերուեան բաժնետէրերից է Աննա Հրանտի Բեգլարեանը՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախկին փոխնարար (2000-2013) հրանտ Բէգլարյանի դուստրը: Մնացած 50 %-ի բաժնետէրն է ոմն գուրգէն Ջաբարեան: «Ծաղկահովիտ» Սպըն-ին պատկանող գոյքի մակերեսը 0.8 հա է, որը բաժանման յատկագծի հիման վրայ 2011 թ.-ին է գրանցուել:

Մի մասն այսօր պատկանում է «Ծաղկահովիտ» Սպըն-ին, միւս երկու մասերը՝ «բնութեան հրաշք» Փբը-ին: Կադաստրային գործում պետական այս գոյքը մասնաւորեցնելու մասին տեղեկութիւն չկայ: 2002 թ. գոյքի մի մասն աճուրդով վաճառուել է Վրէժ Խաչատրեանին, որն էլ 2004 թ. այն վաճառել է «բնութեան հրաշք» պանսիոնատ Սպըն-ին:



### «Գրիշայ Յակոբեանի Անուան» Պիոներական ճամբար. «Ալպինայ» Դիւրանոց

Խորհրդային հերոս, պիոներ Գրիշայ Յակոբեանի անունը կրող ճամբարի տարածքում այսօր գործում է «Ալպինայ» հիւրանոցը: Ճամբարը խորհրդային տարիներին պատկանում էր Երեւանի ժամացոյցների գործարանին. այն տեղակայուած էր փայտաշէն տնակներում: Ժամացոյցների գործարանի ճամբարի տեղում այսօր երեք գոյքային միաւոր կայ: «Ալպինայ» հիւրանոցը տեղակայուած է Ծաղկածորի Ջարենցի փակուղի 7 հասցեում: Կադաստրային գործի տուեալներով՝ նշուած հասցեի գոյքը պատկանել է «սապֆիր» Փբը-ին, որը կառավարուեան որոշմամբ մասնավորեցման ենթակայ է եղել 1999 թ.-ից: Արդէն 2002 թ. գույքն օտարուել է ոմն Տիգրան Պետրոսյանին, որից էլ այն ժառանգել է Գայանե Պետրոսյանը ու նուիրել ամուսնուն՝ կարեն Մարգարեանին: Վերջինս ՀՀ-ական է, 2004-ից 3 տարի աշխատել է վարչապետի վերահսկողական ծառայութիւնում: Կարէն Մարգարեանը Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարեանի հարազատներից է:

Կարէն Մարգարեանն իր գոյքից մի մասն առանձնացրել է եւ որպէս առանձին միաւոր գրանցել: «Ալպինայ» հիւրանոցն ու 10 քոթէժները շահագործող ընկերութիւնը «Ալպինայ ՏՏ» Սպըն-ն է: Ընկերութեան հիմնադիրը ու քրանիայի քաղաքացի Գայանե Պետրոսյանն է, որը, ինչպէս նշեցինք, կարէն Մարգարեանի կինն է: Հիւրանոցի գործունէութիւնը Գ. Պետրոսյանն է կազմակերպում, քանի որ վերջինս նաեւ հյուրանոցի տնօրէնն է:

«Ալպինայ» հիւրանոցի տարածքին կից գտնուող հողակտորն ու գոյքը պատկանում են Գրիգոր Սուքիասեանին, որն էլ այն ժառանգել է իր ծնողներից: Դրանից առաջ 1.78 հա անշարժ գոյքը գրանցուած է եղել «Երեւանի ժամացոյցների գործարան» Բբը-ի անուամբ, իսկ մասնավորեցվել է 2003-ին՝ աճուրդով: գրիգոր Սուքիասեանը յայտնի է «գլորիայի Գրիշայ» անուանումով (նա «Գլորիայ» անուանով խաղատուն է ունեցել): 2011 թ. Գրիգոր Սուքիասեանը Երեւանի ժամանցի կենտրոններից մէկում տեղի ունեցած ծեծկուտուքի մասնակից է եղել:

(Շարունակելի)

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՄ**  
 Փասատիմայի լաւ շրջանի մէջ վարձու տուն 3 սենեակ եւ 2 բաղնիք ամէն ինչ ներառեալ: No section 8: Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ ճօին (626)578-9200

**HOUSE FOR RENT**  
 3 bedroom 2 bath in Pasadena nice neighborhood© Everything included© No section 8  
 Ask Joe (626)578-9200

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԱՅԱԶԴ



ԿԱՐԱՊԵՏ ՀԱՆՆԷՍԵԱՆ (1925ին Պէյրուսի ծննդավայր)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր հօր, հօրեղբոր եւ հարազատին՝ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՆՆԷՍԵԱՆԻ մահը որ պահատեցաւ Երկուշաբթի, Փետրուար 18, 2019ին:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, Փետրուար 20, 2019ին Ռեմէյլի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, որմէ ետք հանգուցեալի մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

Սգակիրներ՝

Տիար Յակոբ եւ Վիգէն Հաննէսեան

Տիկ. Սօսի Յովհաննէս Հաննէսեան եւ զաւակները Շահէ եւ Հրաչ եւ ընտանիք

Տիկ. Անայիս եւ Յակոբ Մարթայեան եւ զաւակները՝ Նիրա, Սամուէլ եւ Պետրոս եւ ընտանիք

Տէր եւ Տիկ. Փիեռ եւ Սօսի Փօլատեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Սեւան Պաճեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Վահէ եւ Նայիրի խաչատուրեան եւ զաւակունք

եւ համայն Հաննէսեան, Մարթայեան, Քիւփեյեան, Սաչեան, Աջապահեան, Գեւորեան, Փօլատեան, Պաղճեան, խաչատուրեան, Թովմասեան, Պողոսեան, Շաքլեան, Կարդացողեան, Գալինճեան, Գասարճեան, Քէօսէեան եւ Տէմիրճեան ընտանիքներ եւ համայն ազգակիցներ:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԹԱԳՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Մարտ 3, 2019 Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd, Pasadena: Խնդրողներն են

Տիկ. Անահիտ Պալեան եւ զաւակունք

Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սեդա Նիկողոսեան եւ զաւակունք

եւ համայն Նիկողոսեան, Պալեան, Մխիթարեան, Մանկրեան, Պուրճի, Պրիօնէս, Արսէնեան, Տէր Յակոբեան եւ Ազիզեան ընտանիքներ:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ՆՈՒՆԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»-ի խմբագրութիւնը իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի բոլոր հարազատներուն, յատկապէս իր զաւակին՝ Տէր եւ Տիկին Մանուկ եւ Լենա Մանուկեաններուն:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ՆՈՒՆԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Ս.ի Տիկնայ Օժանդակ Մարմինը իր խորին վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի բոլոր հարազատներուն, յատկապէս իր զաւակին՝ Տէր եւ Տիկին Մանուկ եւ Լենա Մանուկեանին եւ դստեր Տէր եւ Տիկ. Պենոն եւ Ռոժիքա Կարապետեաններուն:

Ոչ եւս է Հայ Տպագրութեան Նուիրեալ Կարապետ Հաննէսեան

Վերջերս Պէյրուսի մէջ իր մահկանացուն կնքեց Շիրակ տպարանի եւ նոյնանուն գրատան հիմնադիրներէն Կարապետ Հաննէսեան:

Կարապետ Հաննէսեան իր եղբոր Յովհաննէսի հետ միասին աշխատանք տարած է հայ տպագրութեան գործը զարգացնելու առումով:

Ան առաջիններէն մէկն էր որ Պէյրուսի մէջ տպագրեց հայ դասական գրողներու գործերը: Հաննէսեան եղբայրները տարիներ շարունակ, տպագրեցին ու տարածեցին բառարաններ, երազահաններ եւ այլ արեւմտաւոր գիրքեր ու ժողովածուներ: Նշանաւոր են յատկապէս իրենց հանրայայտ «Շիրակ» երգարաններու մատենաշարը, որոնք ցարդ կը տպագրուին:

Կարապետ Հաննէսեան կը թղթակցէր նաեւ հայ մամուլին: Ան եղած է նաեւ Պէյրուսի Հայ Մարմնամարզական Միութեան (Հ.Մ.Մ.) վարչութեան քարտուղար:

«ՄԱՍԻՍ»

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՆՆԷՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով տեղւոյս Հ.Մ.Ս.ի վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: Մասնաւորաբար իր որդիներուն Յակոբ եւ Վիգէն Հաննէսեաններուն:

Mark Your Calender

March 24 – Book presentation by Adrienne G. Alexanian, editor of her father’s memoir " Forced into Genocide: Memoirs of an Armenian Soldier in the Ottoman Turkish Army"

Sunday – 2:30 p.m. Museum of Tolerance  
Co-sponsored by AGBU, AIWA, NAASR, AAA  
9786 Pico Blvd. Los Angeles, CA. 90035  
- RSVP (310) 772-2505

\*\*\*\*\*

March 28 – Book presentation by Adrienne G. Alexanian, editor of her father’s memoir "Forced into Genocide: Memoirs of an Armenian Soldier in the Ottoman Turkish Army"

Thursday – 7:00p.m. Glendale Downtown Central Library  
\* With support from the ANCA  
222 East Harvard Street Glendale, CA. 91205  
- RSVP (818) 548- 2021

Հայկական Նոր Ծաղկասայլը

Շարունակուած էջ 8-էն

Նոր արշաւ մը:

Հայկական ծաղկասայլը ծնունդ առած է 2014ին: Անոր մեծագոյն ջատագովներէն էր Ստեփան Փարթամեանը, որ դարձաւ Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութեան հիմնադիր անդամներէն մէկը, եւ որ ընկերակցութեան վարչութեան մէջ ծառայած է այդ թուականէն ի վեր: Այս ամիս, Փարթամեան հրաժարեցաւ վարչութենէն, տրուած ըլլալով որ ան կը ծրագրէ Հայաստան տեղափոխուիլ Յունիսին եւ կեդրոնանալ իր նախաձեռնած «Յեղապրում» ծրագրին վրայ:

«Այսօր, երբ փաստիւայի վարդատօնին մասնակցելու մեր տեսլականը հոյակապ իրականութիւն մը դարձած է, ինծի համար ժամանակը եկած է յաջորդ մեծ ծրագրիս՝ «Յեղապրում» ձեռնարկը մշակելու, մասնաւորապէս որ

կասկած չունիմ, թէ Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութեան նորընտիր վարչութիւնը լիովին պիտի կատարէ իր պարտականութիւնները», Փարթամեան յայտնեց:

«Ցարդ կարողացանք յաջողապէս ներկայացնել հայկական հինգ ծաղկասայլեր՝ մեր բոլոր նուիրատուներուն ու կամաւորներուն օգնութեամբ. շարունակենք մեր երթը», ըսաւ Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութեան անդամ Յարութ Գօօզեան:

2020-ի հայկական ծաղկասայլի իրագործման համար տուրքէ գերծ նուիրատուութիւններ կարելի է կատարել Ամերիկահայ Ծաղկասայլի Ընկերակցութեան կայքին միջոցով՝ aarfa.org, կամ չէքեր ուղարկելով հետեւեալ հասցէին՝ American Armenian Rose Float Association, P. O. Box 60005, Pasadena, CA 91116:

Վարդանանց Գոյամարտը

Շարունակուած էջ 8-էն

ոմանք ալ իրենց նկարագիրն ու ինքնութիւնը կորսնցուցին: Նոյնինքն Պարսկաստանը որ Աւարայրի պատերազմէն երկու հարիւր տարի ետք ենթարկուեցաւ նորահաս արաբական արշաւանքներուն, կորսնցնելով իր պահպանութիւնը լեզուն, գիրն ու մասնաւորապէս դաշտական կրօնքը: Գրեցին արաբերէն տառերով, լքեցին կրակն ու պաշտեցին Մարգարէն: Եւ ինչ հեզնանք, այսօր հայը մնացած է հայ իր հարազատ լեզուով, գիրով եւ գրականութեամբ, ու իրեն յանձնուած առաջին կարգի կրօնքով՝ քրիստոնէութեամբ, եւ հակառակ իր շատ սահմանափակ

տարածքին եւ թիւին ու քաղաքական դժիւմ պատահարներուն, մնաց աներբը:

Այդ բոլորին պատասխանը կուտան Վարդանանք իրենց նահատակութեամբ եւ ցոյց տուած վճարկամութեամբ ու զայն կը թողուն յետագայ սերունդներուն իբրեւ աւանդ անժամանցելի: Ուստի, մեր տարեկան յուշատօներու նպատակը չի կրնար ըլլալ մեքենաբար մեր անցեալին տուրք մը վճարել եւ մեր գործին վերադառնալ: Այդ պիտի ըլլար ողբալի վրիպում մը: Իրականին մէջ Վարդանանք կը ներկայացնեն ճշմարիտ արժէքներ ու անոնց հասկացողութեան ապացոյցը կուտան՝ որ է հայուն գոյատեւումը:

# ՄԱՐՁԱԿԱՆ

## «Արսենալ»-ը Յաղթանակ Տօնեց «Սաութհեմփթոն»-ի Դէմ Միտիթարեանը Կոլի եւ Կոլային Փոխանցման Զեղինակ



ԱՊԼ-ի 27-րդ տուրում «Արսենալ»-ը «Էմիրեյթս»-ում ընդունեց «Սաութհեմփթոն»-ին ու 2:0 հաշուով յաղթանակ տարաւ:

Հանդիպման հաշիւը 6-րդ րոպէին Միտիթարեանի փոխանցումից յետոյ բացեց Լիակազետը. 11 րոպէ անց արդէն Հայաստանի հաւաքականի կիսապաշտպանը իր անունը վառեց լուսատախտակին, իսկ փոխանցման հեղինակը Իվոբին էր:

Այս յաղթանակից յետոյ «գինագործներ»-ը հաւաքեցին 53 միաւոր ու տեղափոխուեցին 4-րդ հորիզոնական, իսկ «Սաութհեմփթոն»-ը 24 միաւորով մնաց 18-րդ տեղում:

Պրեմիեր լիգայի 27-րդ տուրի կեդրոնական խաղում «Մանչեսթեր Յունայթեդ»-ը «Օլդ Թրաֆորդ»-ում ընդունեց Խոյսեանութեան գլխաւոր հաւակնորդ «Լիւերպոլ»-ին:

Լարուած պայքարում անցած խաղում ալդպէս էլ կոլեր չգրանցուեցին: Այս հանդիպումից յետոյ «Լիւերպոլ»-ը 66 միաւորով կրկին ստանձնեց առաջատարի դերը, իսկ «Կարմիր սատանաներ»-ը 52 միաւորով 5-րդն են:

## Դորտմունդի «Բորուսիան» Առաջ Անցաւ «Բաւարիայից»

Գերմանական Բունդեսլիգայի 23-րդ տուրում առաջատար Դորտմունդի «Բորուսիան» ընդունեց Լեւերկուզենից ժամանած «Բայերն» եւ յաղթեց 3:2 հաշուով:

Այս յաղթանակից յետոյ «Բորուսիան» 54 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ 3 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող Միլնիսենի «Բաւարիայի» նկատմամբ: «Բայերը» 36 միաւորով 7-րդ տեղում է:

## Լա Լիգա. «Սեւիլիա» - «Բարսելոնա»՝ 2:4

Սպանիայի առաջնութեան 25-րդ տուրում «Բարսելոնա»-ն հիւրընկալուելիս 4:2 հաշուով կամային յաղթանակ տօնեց «Սեւիլիա»-ի նկատմամբ:

Խաղի հաշիւը 22-րդ րոպէին տանտէրերի կազմում բացել է Նաւասը: Քիչ անց պատասխան գնդակը խփել է Մեսսին: Առաջին կէսի վերջում անդալուսիական թիմին առաջ է մղել Մերկադոն: 67-րդ րոպէին Մեսսին կրկին հաւասարեցրեց հաշիւը: 85-րդ րոպէին արժենթինացին իր հաշուին հեթ-տրիկ գրանցեց: Խաղաւարտից րոպէներ առաջ հանդիպման վերջնական հաշիւը ձեւակերպեց Սուարեսը՝ 4-2:

Այս յաղթանակի շնորհիւ «Բարսելոնա»-ն 57 միաւորով շարունակում է մնալ առաջին հորիզոնականում:

## «Ռեալը» Բարդ Յաղթանակ Տարաւ Վալենսիայում

Սպանական Պրիմերայի 25-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» մրցակցի խաղադաշտում 2:1 հաշուով առաւելութեան հասաւ «Լեանտեի» նկատմամբ:

Վալենսիայում կայացած խաղում Արքայական ակումբը 2 կոլերն էլ խփեց 11 մեթրանոց հարուածներով, որոնք անվրէպ իրացրին ֆրանսացի յարձակուող Քարիմ Բենզեման ու ուելսցի կիսապաշտպան Գարեթ Բեյլը: 2 դէպքում էլ հանդիպման գլխաւոր մրցավարը 11 մեթրանոց հարուած նշանակեց VAR համակարգով կրկնապատկերը դիտելուց յետոյ: Թիմերը խաղն աւարտեցին 10-ական խաղացողներով:

«Ռեալը» 48 միաւորով երրորդ տեղում է եւ շարունակում է 9 միաւոր գիջել առաջատար «Բարսելոնային»: Երկրորդ տեղում գտնուող Մադրիդի «Աթլետիկոն» ունի 50 միաւոր:

## «Մանչեսթեր Սիթին» Եզրափակիչում 11 Մեթրանոցներով Յաղթեց «Չելսիին»



Ֆուտպոլի Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում գործող գաւաթակիր «Մանչեսթեր Սիթին» յետխաղեայ 11 մեթրանոցներով յաղթեց Լոնտոնի «Չելսիին»: Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում կայացած հանդիպման հիմնական եւ աւելացուած ժամանակն աւարտուեց 0:0: հաշուով:

Յետխաղեայ 11 մեթրանոցների ժամանակ «Չելսիից» վրիպեցին պրագիլայիններ Ժորժինիոն ու Դաւիթ Լուիսը, իսկ Սեսար Ասպիլիկուետան, էդերսոնն ու էդեն Ազարը դիպուկ էին: «Մանչեսթեր Սիթիից» դարպասը գրաւեցին Իլկայ Գինդոգանը, Սերխիո Ագուերոն, Բերնարդօ Սիլվան ու Ռահիմ Ստերլինգը, իսկ Լերոյ Սաննս վրիպեց:

«Մանչեսթեր Սիթին» պաշտպանեց տիտղոսը եւ 6-րդ անգամ յաղթեց Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութիւնում:

Սա «Մանչեսթեր Սիթին» գլխաւորող Խոսեպ Գուարդիոլայի 25-րդ տիտղոսն էր մարզչական կարիերայում: Վերջին 6 տարում մանչեսթերեան ակումբը չորրորդ անգամ յաղթեց այս մրցաշարում:

Յիշեցնենք, որ «Մանչեսթեր Սիթին» ու «Չելսին» նախորդ անգամ հանդիպել էին Փետրուարի 10-ին, երբ Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած թիմը յաղթել էր 6:0 հաշուով: Աւելի վաղ բրիտանական մամուլում լուրեր էին շրջանառուում, որ «Չելսիի» գլխաւոր մարզիչ Մաուրիցիո Սարին պաշտօնանկ կ'արուի Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչում պարտուելու դէպքում:

## Եւրոպայի Լիգա 1/8 Եզրափակիչի Վիճակահանութեան Արդիւնքները

Շուեյցարական Նիոնում Փետրուարի 22-ին անցկացուեց ֆուտպոլի Եւրոպայի լիգայի 1/8 եզրափակիչի վիճակահանութիւնը:

Փլեյ-օֆֆի առաջին փուլում Բելառուսի Խոյսեան Բորիսովի ԲԱՏԷ-ին պայքարից դուրս թողած Լոնտոնի «Արսենալին» բաժին հասաւ ֆրանսական «Ռենը», որը 1/16 եզրափակիչում 2 խաղերի արդիւնքում յաղթեց սպանական «Բետիսին» (3:3, 3:1):

Այս փուլում բոլոր թիմերը կարող էին հանդիպել իրար՝ բացառութեամբ Կիւելի «Դինամոյի» եւ ռուսական ակումբների (Ուկրաինայի ու Ռուսաստանի միջեւ կոնֆլիկտի պատճառով):

Եւրոպայի լիգայի 1/8 եզրափակիչի առաջին հանդիպումները տեղի կ'ունենան Մարտի 7-ին, իսկ պատասխան խաղերը՝ Մարտի 14-ին: Քառորդ եզրափակիչի գոյգերը եւս որոշելու են վիճակահանութեամբ:

Յիշեցնենք, որ Եւրոպայի լիգայի գործող յաղթողն է Մադրիդի «Աթլետիկոն», որն այս տարի հանդէս է գալիս Ախոյսեանների լիգայում: Եւրոպայի լիգա, 1/8 եզրափակիչ

- «Չելսի» (Անգլիա) - «Դինամօ Կիւել» (Ուկրաինա)
- «Այնտրախտ Ֆրանկֆուրտ» (Գերմանիա) - «Ինտեր» (Իտալիա)
- «Դինամօ Չապրե» (Պորուգալիա) - «Բենֆիկա» («Պորտուգալիա»)
- «Նապոլի» (Իտալիա) - «Չալցերուրգ» (Աւստրիա)
- «Վալենսիա» (Սպանիա) - «Կրասնոդար» (Ռուսաստան)
- «Սեւիլիա» (Սպանիա) - «Սլաւիա» (Չեխիա)
- «Արսենալ» (Անգլիա) - «Ռեն» (Ֆրանսա)
- «Չենիթ» («Ռուսաստան») - «Վիլիաուեալ» (Սպանիա):

## Շախմատի Աշխարհի Առաջնութիւն. Հայաստանի Կազմը

Ֆիդե-ն հրապարակել է Մարտի 4-ից 15-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում մեկնարկելիք շախմատի աշխարհի թիմային առաջնութեան մասնակիցների յայտացուցակները: Կանանց Հայաստանի հաւաքականը Զաւէն Անդրիասեանի գլխաւորութեամբ հանդէս կը գան հետեւեալ կազմով. Էլինա Գանիէլեան, Լիլիթ Մկրտչեան, Աննա Մ. Սարգսեան, Մարիա Գէորգեան, Սիրանուշ Ղուկասեան:

Յիշեցնենք, որ կանանց Հայաստանի հաւաքականն աշխարհի առաջնութեան մասնակցութեան իրաւունքը ստացել է 2018թ. Օլիմպիադայում 6-րդ տեղ գրաւելու շնորհիւ:

Կանանց պայքարում հանդէս կը գան նաեւ Ռուսաստանի, Չինաստանի, Ուքրաինայի, Վրաստանի, ԱՄՆ-ի, Հունգարիայի, Եգիպտոսի, Ղազախստանի եւ Հնդկաստանի թիմերը:

Տղամարդկանց Հայաստանի հաւաքականը չի մասնակցի աշխարհի թիմային առաջնութեանը: Հայաստանի թիմը ստացել է երկրորդ պահեստայինի կարգավիճակ՝ երկու հաւաքականների հրաժարուելու կամ այլ պատճառներով չմասնակցութեան դէպքում, կը ստանայ խաղալու իրաւունք:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)**  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**